

Սույն փաստաթուղթը միայն տեղեկատվական գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

- B Բնական գազի փոխադրման ցանցերի հասանելիության պայմանների մասին և թիվ 1775/2005 (ԵՀ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 715/2009 (ԵՀ) ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(ՊՏ L 211, 14.08.2009թ., էջ 36)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		Թիվ	էջ	ամսաթիվ
► M1	Հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 10-ի L 293 որոշումով	67		11.11.2010

Ուղղված՝

- C1 Ուղղումով՝ ՊՏ L 229, 01.09.2009թ., էջ 29 (715/2009)
- C2 Ուղղումով՝ ՊՏ L 309, 24.11.2009թ., էջ 87 (715/2009)

▼ B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 95-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը (1),

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն(3),

Քանի որ

- 1) բնական գազի ներքին շուկան, որն աստիճանաբար գործում է սկսած 1999 թվականից, նպատակ ունի Համայնքի բոլոր սպառողներին, լինեն նրանք քաղաքացիներ, թե գործարարներ, ընձեռելու իրական ընտրության հնարավորություն, նոր բիզնես հնարավորություններ և ավելի լայն միջսահմանային առևտուր՝ հասնելու համար արդյունավետության ձեռքբերման, մրցակցային գների և ծառայության ավելի բարձր չափանիշների և նպաստելու համար մատակարարման անվտանգությանն ու կայունությանը,
- 2) բնական գազի ներքին շուկայի ընդհանուր կանոնների վերաբերյալ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունիսի 26-ի 2003/55/ԵՀ հրահանգը (4) և «Բնական գազի փոխադրման ցանցերի հասանելիության պայմանների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1775/2005 (ԵՀ) կանոնակարգը (5) զգալի ներդրումներ են կատարել բնական գազի այդպիսի ներքին շուկա ստեղծելու գործում,
- 3) 2002 թվականին Գազի հարցերով Եվրոպական ֆորումի (Մադրիդյան ֆորում) կողմից ընդունված պատշաճ գործունեության ուղեցույցների առաջին հավաքածուի իրականացման և մոնիտորինգի արդյունքում կուտակված փորձը ցույց է տալիս, որ այդ ուղեցույցներում նշված կանոնների լիարժեք իրականացումը բոլոր անդամ պետություններում ապահովելու, ինչպես նաև գործնականում շուկայի հավասարաչափ հասանելիության պայմանների նվազագույն երաշխավորումն ապահովելու համար անհրաժեշտ է դրանք օրինականորեն կիրառելի դարձնել,
- 4) «Պատշաճ գործունեության երկրորդ ուղեցույցներ» կոչվող ընդհանուր կանոնների երկրորդ հավաքածուն ընդունվել է 2003 թվականի սեպտեմբերի 24-ին և 25-ին Մադրիդի ֆորումի հանդիպման ժամանակ, և սույն Կանոնակարգի նպատակն է այդ

ուղեցույցների հիման վրա ստեղծել հիմնական սկզբունքներ և կանոններ, որոնք վերաբերում են ցանցի հասանելիությանը և երրորդ կողմի համար հասանելի ծառայություններին, գերբեռնվածությունների կառավարմանը, թափանցիկությանը, ծառայությունների մատուցմանն ու թողունակություն օգտագործելու իրավունքների վաճառքին,

- 5) բնական գազի ներքին շուկայի ընդհանուր կանոնների վերաբերյալ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի 2009/73/ԵՀ հրահանգը (6) համակցված փոխադրման և բաշխման համակարգի օպերատորի հնարավորություն է նախատեսում: Սույն Կանոնակարգով նախատեսված կանոններն այդ կապակցությամբ ազգային փոխադրման և բաշխման համակարգերի կազմակերպման փոփոխություն չեն պահանջում, որոնք համապատասխանում են այդ հրահանգի համապատասխան դրույթներին,
- 6) տեղական դիստրիբյուտորներին գազի ցանցին միացնող բարձր ճնշման խողովակաշարերը, որոնք հիմնականում չեն օգտագործվում տեղական բաշխման դեպքում, ընդգրկված են սույն Կանոնակարգի գործողության ոլորտում,
- 7) անհրաժեշտ է հստակեցնել չափորոշիչները համաձայն որոնց որոշվում են ցանցի մատչելիության սակագները, որպեսզի հնարավոր լինի ապացուցել, որ դրանք ամբողջությամբ համապատասխանում են խտրականությունը բացառող սկզբունքին և լավ գործող ներքին շուկայի կարիքներին, ինչպես նաև հաշվի են առնում համակարգի ամբողջականության կարիքը և արտացոլում են իրականում կատարված ծախսերն այնքանով, որքանով այդ ծախսերը համապատասխանում են արդյունավետ և կառուցվածքայնորեն համեմատելի ցանցի օպերատորի իրականացրած ծախսերին և թափանցիկ են՝ ներառյալ ներդրումային պատշաճ եկամուտները՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով կարգավորող մարմինների կողմից սակագների համար սահմանված հենանիշերը,

- 8) ցանցերի մատչելիության սակագները հաշվարկելիս կարևոր է հաշվի առնել կատարված իրական ծախսերն այնքանով, որքանով այդ ծախսերը համապատասխանում են արդյունավետ և կառուցվածքայնորեն համեմատելի ցանցի օպերատորի իրականացրած ծախսերին և թափանցիկ են, ինչպես նաև հաշվի առնել նոր ենթակառուցվածքների կառուցման համար իրականացվող ներդրումային պատշաճ եկամուտները և խրախուսական միջոցները՝ ներառյալ 2009/73/ԵՀ հրահանգով սահմանված նոր ներդրումների համար նախատեսված հատուկ կարգավորող ռեժիմը: Այս առումով, և ընդհանրապես, եթե գոյություն ունի գազատարից գազատար արդյունավետ մրցակցություն, ապա կարգավորող մարմինների կողմից սակագների համար սահմանված հենանիշերը համապատասխան փոխհատուցում կլինեն,
- 9) սակագները որոշելու համար կիրառվող շուկայական գործիքները՝ ինչպես օրինակ աճուրդները, պետք է համապատասխանեն 2009/73/ԵՀ հրահանգով սահմանված դրույթներին,
- 10) անհրաժեշտ է երրորդ կողմի համար հասանելի ծառայությունների ընդհանուր նվազագույն շրջանակ՝ Համայնքի տարածքում գործնականում մատչելիության որոշակի նվազագույն չափանիշներ տրամադրելու համար՝ ապահովելու համար, որ երրորդ կողմի համար հասանելի ծառայությունները բավարար չափով համատեղելի են և թույլ տալու համար, որ բնական գազի լավ գործող ներքին շուկայից ստացված շահույթներն օգտագործվեն նպատակային,
- 11) ներկայումս Համայնքում կան առանց խտրականության կամ թերության՝ հավասար պայմաններով գազի վաճառքի հետ կապված խոչընդոտներ: Մասնավորապես, խտրականությունը բացառող ցանցի մատչելիությունն ու կարգավորիչ վերահսկողության հավասարաչափ արդյունավետ մակարդակը դեռևս առկա չեն յուրաքանչյուր անդամ պետությունում, և մեկուսացված շուկաները շարունակում են գոյություն ունենալ,

- 12) անհրաժեշտ է հասնել գազամատակարարման համակարգերի միջև միջսահմանային փոխմիացումների թողունակության բավարար մակարդակի և նպաստել շուկայի ինտեգրմանը՝ գազի ներքին շուկան ամբողջական դարձնելու համար.
- 13) Հանձնաժողովի 2007 թվականի հունվարի 10-ի «Եվրոպայի էներգետիկ քաղաքականություն» կոչվող հաղորդագրությունն ընդգծեց բնական գազի ներքին շուկան ամբողջական դարձնելու և Համայնքում բնական գազի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների միջև մրցակցային հավասար պայմաններ ստեղծելու կարևորությունը: Հանձնաժողովի 2007 թվականի հունվարի 10-ի «Գազի և էլեկտրաէներգիայի ներքին շուկայի հեռանկարներ» և «Գազի և էլեկտրաէներգիայի եվրոպական սեկտորում թիվ 1/2003 (ԵՀ) կանոնակարգի 17-րդ հոդվածի համաձայն իրականացվող ուսումնասիրություն (Վերջնական հաշվետվություն)» կոչվող հաղորդակցությունները ցույց տվեցին, որ ներկայիս կանոններն ու միջոցները ոչ անհրաժեշտ շրջանակ են տրամադրում, ոչ էլ փոխմիացման թողունակություն են ստեղծում, որոնք կօգնեին իրականացնելու լավ գործող, արդյունավետ և բաց ներքին շուկա ունենալու նպատակը,
- 14) բացի գոյություն ունեցող կարգավորող շրջանակը հավուր պատշաճի իրականացնելուց, անհրաժեշտ է ընդունել թիվ 1775/2005 կանոնակարգում (ԵՀ) նշված բնական գազի ներքին շուկայի համար նախատեսված կարգավորող շրջանակը՝ այդ հաղորդակցություններին համապատասխան,
- 15) մասնավորապես, փոխադրման համակարգի օպերատորների շրջանում անհրաժեշտ է ընդլայնված համագործակցություն և համակարգում՝ միջսահմանային փոխադրման ցանցերի արդյունավետ և թափանցիկ հասանելիությունն ապահովելու և կազմակերպելու նպատակով ցանցի ծածկագրեր ստեղծելու համար և Համայնքում փոխադրման համակարգի համակարգված և բավարար առաջադեմ պլանավորում և արդյունավետ տեխնիկական զարգացում ապահովելու համար՝ ներառյալ փոխմիացման թողունակությունը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով շրջակա միջավայրը: Ցանցի ծածկագրերը պետք է համապատասխանեն շրջանակային

ուղեցույցներին, որոնք իրենց բնույթով պարտադիր չեն (շրջանակային ուղեցույցներ) և մշակվում են Էներգետիկայի կարգավորիչների համակարգման գործակալությունը հիմնադրող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 713/2009 (ԵՀ) կանոնակարգով (7) նախատեսված () Էներգետիկայի կարգավորիչների համակարգման գործակալության կողմից (Գործակալություն): Գործակալությունը պետք է, հիմնվելով փաստացի իրադրության վրա, դեր խաղա ցանցի ծածկագրերի նախնական տարբերակը վերանայելու գործում՝ ներառյալ դրանց համապատասխանությունը շրջանակային ուղեցույցներին, և այն պետք է հնարավորություն ունենա խորհուրդ տալու, որ Հանձնաժողովն ընդունի այդ ծածկագրերը: Գործակալությունը պետք է գնահատի ցանցի ծածկագրերի վերաբերյալ առաջարկվող փոփոխությունները և հնարավորություն ունենա խորհուրդ տալու, որ Հանձնաժողովն ընդունի այդ ծածկագրերը: Փոխադրման համակարգի օպերատորները պետք է իրենց ցանցերը շահագործեն ցանցի այդ ծածկագրերի համաձայն,

- 16) Համայնքում գազի փոխադրման ցանցի օպտիմալ կառավարումն ապահովելու համար պետք է ստեղծվի Գազի փոխադրման համակարգի օպերատորների եվրոպական ցանց (Գազի ՓՀՕԵՑ): Գազի ՓՀՕԵՑ-ի առաջադրանքները պետք է իրականացվեն Համայնքի մրցակցային կանոններին համապատասխան, որոնք մնում են կիրառելի Գազի ՓՀՕԵՑ-ի որոշումների նկատմամբ: Գազի ՓՀՕԵՑ-ի առաջադրանքները պետք է լինեն հստակ որոշված և դրա աշխատանքային մեթոդը պետք է ապահովի Գազի ՓՀՕԵՑ-ի արդյունավետ, թափանցիկ և ներկայացուցչական բնույթը: Գազի ՓՀՕԵՑ-ի կողմից պատրաստված ցանցի ծածկագրերը նախատեսված չեն ազգային ցանցի համար անհրաժեշտ ծածկագրերին փոխարինելու համար՝ կապված ոչ միջսահմանային հարցերի հետ: Հաշվի առնելով, որ ավելի արդյունավետ առաջընթացի կարելի է հասնել տարածաշրջանային մակարդակով մոտեցման միջոցով՝ փոխադրման համակարգի օպերատորները պետք է համագործակցության ամբողջ կառուցվածքի մասշտաբով ստեղծեն տարածքային կառույցներ՝ ապահովելով, որ տարածաշրջանային մակարդակով արդյունքները համապատասխանում են ցանցի ծածկագրերին և Համայնքի մակարդակով ցանցի զարգացման ոչ պարտադիր տասնամյա ծրագրերին: Տարածաշրջանային այդ կառույցների ներսում համագործակցությունը ենթադրում է ցանցի հետ կապված գործողությունների արդյունավետ տարանջատում արտադրության և մատակարարման գործողություններից: Նման տարանջատման

բացակայության դեպքում, փոխադրման համակարգի օպերատորների միջև տարածաշրջանային համագործակցությունը հակամրցակցային վարքագծի դիսկ է ծնում: Անդամ պետությունները խթանում են համագործակցությունը և դիտանցում տարածաշրջանային մակարդակով ցանցի գործունեության արդյունավետությունը: Տարածաշրջանային մակարդակով համագործակցությունը պետք է համապատասխանի գազի մրցակցային և արդյունավետ ներքին շուկա ստեղծելու առաջընթացին,

- 17) շուկայի բոլոր մասնակիցները շահագրգռված են Գազի ՓՀՕԵՑ-ից ակնկալվող աշխատանքներով: Այդ նպատակով կարևոր է խորհրդակցության արդյունավետ ընթացակարգը, և գոյություն ունեցող կառուցվածքները ստեղծվում են խթանելու և պարզեցնելու համար խորհրդակցության ընթացակարգը՝ ինչպես Էներգիայի փոխանակման ռացիոնալացման եվրոպական ասոցիացիան, ազգային կարգավորող մարմինները կամ գործակալությունը պետք է կարևոր դեր խաղան,
- 18) Համայնքում գազի փոխադրման ցանցի զարգացման առումով ավելի մեծ թափանցիկություն ապահովելու համար Գազի ՓՀՕԵՑ-ը պետք է մշակի, հրապարակի և պարբերաբար թարմացնի ցանցի զարգացման՝ Համայնքի մասշտաբով ոչ պարտադիր տասնամյա ծրագիր (Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագիր): Գազի փոխադրման կենսունակ ցանցերը և անհրաժեշտ տարածաշրջանային փոխմիացումները, որոնք կարևոր են առևտրային և մատակարարման անվտանգության տեսանկյունից, պետք է ընդգրկվեն ցանցի զարգացման այդ ծրագրում,
- 19) գազի մեծածախ լիկվիդային շուկաների միջոցով մրցակցությունը մեծացնելու համար կարևոր է, որ գազը կարողանա վաճառվել՝ անկախ համակարգում իր գտնվելու վայրից: Դա անելու միակ միջոցը ցանցի օգտագործողներին ազատություն տալն է, որ նրանք կարողանան ազատորեն մուտքի և ելքի թույլտվություն ձեռք բերել՝ դրանով իսկ գազի փոխադրումն իրականացնեն որոշակի գոտիների միջոցով՝ փոխարեն պայմանագրային ուղիների: Մուտքի և ելքի համակարգերի միջոցով մրցակցություն

զարգացնելու նախապատվություն են արդեն հայտնել շահագրգիռ կողմերի մեծ մասը 2002 թվականի հոկտեմբերի 30-ին և 31-ին Մադրիդի 6-րդ Ֆորումում: Սակագները չպետք է կախված լինեն փոխադրման երթուղուց: Մուտքի մեկ կամ ավելի կետերի համար սահմանված սակագները չպետք է, այդպիսով, կապված լինեն ելքի մեկ կամ ավելի կետերի համար սահմանված սակագների հետ և հակառակը,

20) փոխադրման համակարգի օպերատորների կողմից ցանցի խտրականությունը բացառող մատչելիության համատեքստում փոխադրումների ներդաշնակեցված պայմանագրերին կատարվող հղումները չեն նշանակում, որ անդամ պետությունում որոշակի համակարգի օպերատորի փոխադրումների պայմանագրերի ժամկետներն ու պայմանները պետք է լինեն նույնը, ինչ որ նույն անդամ պետությունում կամ այլ անդամ պետությունում փոխադրման համակարգի այլ օպերատորինը, մինչև չսահմանվեն նվազագույն պահանջները, որոնք պետք է բավարարեն փոխադրման վերաբերյալ կնքված բոլոր պայմանագրերը,

21) գազի ցանցերում պայմանագրային զգալի գերբեռնվածություն կա: Նոր կամ նոր բանակցված պայմանագրերի համար գերբեռնվածության կառավարման և թողունակությունների բաշխման սկզբունքներն այդպիսով հիմնված են թողունակության չօգտագործված մասերից ազատվելու վրա՝ ցանցի օգտագործողներին հնարավորություն ընձեռելով վերապահելու կամ վերավաճառելու պայմանագրով իրեն տրված հնարավորություններն ու փոխադրման համակարգի օպերատորների պարտականությունները՝ չօգտագործված թողունակությունն առնվազն մեկ օր առաջ շուկային առաջարկելու համար՝ ծառայությունների մատուցումն ընդհատելու հիման վրա: Մեծ մասնաբաժին տալով գոյություն ունեցող պայմանագրերին և նոր կամ գոյություն ունեցող թողունակության օգտագործողների միջև խաղաղաշտի իրական մակարդակ ստեղծելու կարիքին՝ այդ սկզբունքները պետք է կիրառվեն պայմանագրով նախատեսված բոլոր թողունակությունների նկատմամբ՝ ներառյալ գոյություն ունեցող պայմանագրերը,

22) թեև ցանցերի ֆիզիկական գերբեռնվածությունն իրենից ներկայումս Համայնքում

հազվադեպ է խնդիր ներկայացնում, բայց այն կարող է խնդիր դառնալ հետագայում: Այդ իսկ պատճառով այս հանգամանքներում կարևոր է հիմնական սկզբունքներ տրամադրել գերբեռնված թողունակությունների բաշխման համար,

- 23) ազգային կարգավորվող մարմինների և Հանձնաժողովի կողմից վերջին տարիներին ձեռնարկված շուկայի դիտանցումը ցույց տվեց, որ թափանցիկության ներկայիս պահանջները և ենթակառուցվածքի մատչելիության վերաբերյալ կանոնները բավարար չեն իսկական, լավ գործող, բաց և արդյունավետ գազի ներքին շուկա ապահովելու համար,
- 24) համակարգի ֆիզիկական կարգավիճակի և արդյունավետության վերաբերյալ տեղեկությունների հավասար մատչելիությունն անհրաժեշտ է, որպեսզի շուկայի բոլոր մասնակիցները կարողանան գնահատել ընդհանուր պահանջարկի ու առաջարկի իրավիճակը և բացահայտել մեծածախ գների շրջանակում կատարվող բարելավումների պատճառները: Սա ներառում է ավելի ճշգրիտ տեղեկություններ առաջարկի և պահանջարկի, ցանցի կարողության, հոսքերի և պահպանության, հավասարակշռության և պահեստավորման մատչելիության և օգտագործման վերաբերյալ: Շուկայի գործունեության համար այդ տեղեկությունների կարևորությունը պահանջում է մեղմացնել հրապարակման հետ կապված գոյություն ունեցող սահմանափակումները՝ ելնելով գաղտնիությունից,
- 25) առևտրի տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիության պահանջները, այնուամենայնիվ, մասնավորապես համապատասխանում են, երբ հաշվի են առնվում ռազմավարական բնույթի առևտրային տվյալները, երբ պահեստավորման կայանն ունի ընդամենը մեկ օգտագործող կամ եթե հաշվի են առնվում այն տվյալները, որոնք վերաբերում են համակարգի կամ ենթահամակարգի ելքային կետերին, որոնք միացված են ոչ թե փոխադրման կամ բաշխման այլ համակարգերին, այլ արդյունաբերական միակ վերջնական բաժանորդին, երբ այդ տվյալների հրապարակումը բացահայտում է գաղտնի տեղեկությունները, որը վերաբերում է այդ բաժանորդի կողմից իրականացվող արտադրական գործընթացին,

- 26) շուկայում վստահությունը մեծացնելու համար դրա մասնակիցները պետք է վստահ լինեն, որ վիրավորական վարքագիծ ցուցաբերողները կարող են ենթարկվել արդյունավետ, համամասնական և տարհամոզիչ պատժամիջոցների: Իրավասու մարմիններին պետք է իրավասություն տրվի արդյունավետորեն ուսումնասիրելու շուկայի չարաշահման վերաբերյալ հայտարարությունները: Այս կապակցությամբ անհրաժեշտ է, որ իրավասու մարմիններին մատչելի լինեն այն տվյալները, որոնք առաջարկող ձեռնարկությունների կայացրած օպերատիվ որոշումների վերաբերյալ տեղեկություններ են տրամադրում: Գազի շուկայում այդ բոլոր որոշումները հաղորդվում են համակարգի օպերատորներին թողունակության պատվերների, հայտերի և իրացված հոսքերի տեսքով: Համակարգի օպերատորները պետք է այդ մասին տեղեկություններն իրավասու մարմինների միջոցով որոշակի ամրագրված ժամանակով հասանելի և դյուրամատչելի դարձնեն: Իրավասու մարմինները պետք է, բացի այդ, պարբերաբար դիտանցեն փոխադրման համակարգի օպերատորների համապատասխանությունը կանոններին,
- 27) որոշ անդամ պետություններում գազի պահեստարանների և հեղուկացված բնական գազի (ՀԲԳ) կայանների հասանելիությունը բավարար չէ, դրա համար գոյություն ունեցող կանոնների իրականացումը բարելավման կարիք ունի: Էլեկտրաէներգիայի և գազի մասով կարգավորողների եվրոպական խմբի իրականացրած դիտանցումը եզրակացրեց, որ պահեստավորման համակարգի օպերատորների համար երրորդ կողմի մատչելիության պատշաճ գործելակերպի խորհրդատվական ուղեցույցները, որոնք համաձայնեցվել են Մադրիդի Ֆորումում բոլոր շահագրգիռ կողմերի կողմից, բավարար չափով չեն կիրառվում, դրա համար էլ դրանք պետք է պարտադիր դարձվեն,
- 28) փոխադրման համակարգի օպերատորների կողմից աշխատանքի դրվող գազի մատուցման՝ խտրականությունը բացառող և թափանցիկ համակարգերը կարևոր մեխանիզմներ են, մասնավորապես, շուկա նոր մուտք գործողների համար, ովքեր կարող են ավելի շատ դժվարություններ ունենալ իրենց վաճառքի ընդհանուր փաթեթն իրագործելիս, քան համապատասխան շուկայում արդեն իսկ հաստատված ընկերությունները: Դրա համար անհրաժեշտ է կանոններ սահմանել՝ ապահովելու

համար, որ փոխադրման համակարգի օպերատորներն այդպիսի մեխանիզմներն աշխատեցնում են ցանցի՝ խտրականությունը բացառող, թափանցիկ և արդյունավետ մատչելիության պայմաններին համապատասխան ձևով,

- 29) թողունակություններն օգտագործելու նախնական իրավունքների վաճառքը մրցակցային շուկա զարգացնելու և իրացվելիություն ստեղծելու կարևոր մասն է կազմում: Այդ իսկ պատճառով սույն Կանոնակարգը սահմանում է այդ առուվաճառքին վերաբերող հիմնական կանոնները,
- 30) ազգային կարգավորող մարմինները պետք է ապահովեն սույն Կանոնակարգում ներառված կանոններին և դրա համաձայն ընդունված ուղեցույցներին համապատասխանությունը,
- 31) սույն Կանոնակարգին որպես հավելված կցված ուղեցույցներում նշված են կիրարկման հատուկ մանրամասն կանոնները՝ Պատշաճ գործունեության երկրորդ ուղեցույցների հիման վրա: Անհրաժեշտության դեպքում, այդ կանոնները կարող են ժամանակի ընթացքում զարգանալ՝ հաշվի առնելով գազի ազգային համակարգերի տարբերությունները,
- 32) սույն Կանոնակարգին որպես հավելված կցված ուղեցույցները փոփոխելու վերաբերյալ առաջարկ ներկայացնելիս Հանձնաժողովը պետք է ուղեցույցներում ընդգրկված համապատասխան բոլոր կողմերին, ինչպես նաև Մադրիդի Ֆորումի շրջանակներում անդամ պետություններին, ապահովի նախնական խորհրդատվությունով, որոնք ներկայացնում են մասնագիտացված կազմակերպությունները,
- 33) անդամ պետությունները և իրավասու մարմինները պետք է ապահովեն համապատասխան տեղեկությունների տրամադրումը Հանձնաժողովին: Հանձնաժողովն այս տեղեկությունները պետք է գաղտնի պահի,

- 34) սույն Կանոնակարգը և դրա համաձայն ընդունված ուղեցույցները չեն հակասում մրցակցության վերաբերյալ Համայնքի կանոնների կիրառմանը,,
- 35) Սույն Կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան, որով սահմանվում են Հանձնաժողովին վերապահված կատարման լիազորությունների իրականացման ընթացակարգերը (8),
- 36) մասնավորապես, Հանձնաժողովը պետք է իրավասու լինի սահմանելու և ընդունելու սույն Կանոնակարգի նպատակներն իրականացնելու համար պահանջվող ներդաշնակեցման նվազագույն աստիճանն ապահովելու համար անհրաժեշտ ուղեցույցներ: Քանի որ այդ միջոցներն ընդհանուր բնույթ են կրում և նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու և, ի թիվս այլոց, այն նոր, ոչ էական տարրերով լրացնելու համար, ապա դրանք պետք է ընդունվեն թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածով նախատեսված ուսումնասիրություն ներառող կարգավորման ընթացակարգի համաձայն,
- 37) քանի որ սույն Կանոնակարգի նպատակները, մասնավորապես բնական գազի փոխադրման ցանցերի հասանելիության պայմանների համար արդար կանոններ ստեղծելու, պահեստարանների և ՀԲԳ կայանների մասով նպատակները չեն կարող բավարար ձևով իրականացվել անդամ պետությունների կողմից և, այդ իսկ պատճառով, կարող են ավելի լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ համաձայն Պայմանագրի 5-րդ հոդվածում նշված սուբսիդիարության սկզբունքի: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Կանոնակարգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակին հասնելու համար,
- 38) հաշվի առնելով թիվ 1775/2005 (ԵՀ) կանոնակարգում կատարվող փոփոխությունների շրջանակը՝ պարզության և ռացիոնալիզացման նպատակներով ցանկալի է, որ տվյալ դրույթները վերամշակվեն՝ դրանք համախմբելով մեկ միասնական տեքստում՝ նոր

Կանոնակարգում,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

Սույն Կանոնակարգը նպատակ ունի՝

ա) բնական գազի փոխադրման համակարգերի հասանելիության պայմանների համար սահմանել խտրականությունը բացառող կանոններ՝ հաշվի առնելով ազգային և տարածաշրջանային շուկաների հատուկ առանձնահատկությունները՝ նպատակ ունենալով ապահովելու գազի ներքին շուկայի պատշաճ գործելակերպը.

բ) ՀԲԳ կայանների և պահեստարանների հասանելիության պայմանների համար սահմանել խտրականությունը բացառող կանոններ՝ հաշվի առնելով ազգային և տարածաշրջանային շուկաների հատուկ առանձնահատկությունները և

գ) խթանել գազի մատակարարման անվտանգության բարձր մակարդակ ունեցող լավ գործող և թափանցիկ մեծածախ շուկայի ի հայտ գալը և տրամադրել մեխանիզմներ գազի միջսահմանային փոխանակման համար ցանցի մատչելիության կանոնները ներդաշնակեցնելու համար:

Առաջին ենթապարբերության մեջ նշված նպատակները պետք է ընդգրկեն սակագների կամ դրանց հաշվարկումն ընդգծող մեթոդաբանությունների, ցանցի մատչելիության, բայց ոչ պահեստարանների ներդաշնակեցման սկզբունքների սահմանումը, երրորդ կողմի համար հասանելի ծառայությունների սահմանումն ու թողունակության բաշխման և գերբեռնվածության կառավարման համար նախատեսված ներդաշնակեցված սկզբունքները, թափանցիկության պահանջների, ծառայությունների մատուցման վերաբերյալ կանոնների և ծառայությունները չմատուցելու դեպքում գանձվող վճարների որոշումը, ինչպես նաև թողունակությունների վաճառքի դյուրացումը:

Սույն Կանոնակարգը, բացառությամբ 19(4) հոդվածի, պետք է կիրառվի միայն 2009/73/ԵՀ հրահանգի 33(3) կամ (4) հոդվածում նշված պահեստարանների նկատմամբ:

Անդամ պետությունները կարող են հաստատել 2009/73/ԵՀ հրահանգի համաձայն ստեղծված անձին կամ մարմնին՝ փոխադրման համակարգի օպերատորին փոխանցված մեկ կամ ավելի գործառույթներն իրականացնելու նպատակով, որոնց նկատմամբ կիրառվում են սույն Կանոնակարգի պահանջները: Այդ անձը կամ մարմինը ենթակա է հաստատման՝ համաձայն սույն Կանոնակարգի 3-րդ հոդվածի և ենթակա է նշանակման՝ համաձայն 2009/73/ԵՀ հրահանգի 10-րդ հոդվածի:

Հոդված 2

Սահմանումները

1. Սույն Կանոնակարգի նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1) «փոխադրում» նշանակում է բնական գազի փոխադրումը ցանցի միջոցով, որը գլխավորապես բաղկացած է բարձր ճնշման խողովակաշարերից, որոնք տարբերվում են գլխամասային կառույցների ցանցերից և բաշխիչ ցանցերից/բարձր ճնշման խողովակաշարերի այն մասից, որոնք հիմնականում օգտագործվում են բնական գազի տեղական բաշխման համար՝ բաժանորդներին գազ առաքելու նպատակով՝ չներառած մատակարարումը,

2) «փոխադրման պայմանագիր» նշանակում է պայմանագիր, որը փոխադրման համակարգի օպերատորը կնքել է ցանցի օգտագործողի հետ՝ փոխադրում իրականացնելու նպատակով,

3) «թողունակություն» նշանակում է առավելագույն հոսքը՝ արտահայտված նորմալ խորանարդ մետրերով միավոր ժամանակում կամ էներգիայի միավորով միավոր ժամանակում, որը թույլատրվում է ցանցի օգտագործողին՝ համաձայն փոխադրման պայմանագրով նախատեսված դրույթների,

4) «չօգտագործված թողունակություն» նշանակում է հաստատուն թողունակություն, որը ցանցի օգտագործողը ձեռք է բերել փոխադրման պայմանագրի համաձայն, սակայն որի համար օգտագործողը հայտ չի ներկայացրել մինչև պայմանագրով նախատեսված վերջնաժամկետը,

5) «գերբեռնվածության կառավարում» նշանակում է փոխադրման համակարգի օպերատորի իրավասությունների սահմաններում եղած թողունակության փաթեթի կառավարում՝

տեխնիկական հնարավորություններն օպտիմալ և առավելագույնս օգտագործելու և հետագա գերբեռնվածության և հագեցվածության սահմանները ժամանակին բացահայտելու նպատակով,

6) «Երկրորդային շուկա» նշանակում է առաջնային շուկայից բացի այլ կերպ գազի թողունակությունները վաճառելու շուկա,

7) «հայտ» նշանակում է ցանցի օգտագործողի կողմից փոխադրման համակարգի օպերատորին իր կողմից նախատեսվող՝ համակարգի մեջ ներմղվող կամ արտամղվող գազի իրական հոսքի վերաբերյալ նախօրոք տեղեկացում,

8) «ճշգրտված հայտ» նշանակում է նախատեսված հայտի ճշգրտված տարբերակի ներկայացում,

9) «համակարգի ամբողջականություն» նշանակում է փոխադրման ցանցի հետ՝ ներառյալ անհրաժեշտ փոխադրման հարմարությունները, կապված ցանկացած իրավիճակ, երբ բնական գազի ճնշումն ու որակը մնում են փոխադրման համակարգի օպերատորի կողմից սահմանված նվազագույն և առավելագույն սահմանների շրջանակներում, այնպես, որ բնական գազի փոխադրումը երաշխավորվում է տեխնիկական տեսանկյունից,

10) «ծառայությունների կարգավորման ժամանակահատված» նշանակում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում բնական գազի քանակության ընտրանքը, արտահայտված էներգիայի միավորով, պետք է հավասարակշռության բերվի ցանցի յուրաքանչյուր օգտագործողի կողմից՝ միևնույն քանակության գազը դեպի փոխադրման համակարգ մղելու միջոցով՝ համաձայն փոխադրման պայմանագրի կամ ցանցի ծածկագրի,

11) «ցանցի օգտագործող» նշանակում է փոխադրման համակարգի օպերատորի բաժանորդ կամ հնարավոր բաժանորդ և փոխադրման համակարգի օպերատորները հենց իրենք այնքանով, որքանով դա նրանց անհրաժեշտ է փոխադրման հետ կապված իրենց գործառույթներն իրականացնելու համար,

12) «ընդմիջվող ծառայություններ» նշանակում է ծառայություններ, որոնք մատուցում է փոխադրման համակարգի օպերատորը՝ կապված ընդհատվող թողունակության հետ,

13) «ընդհատվող թողունակություն» նշանակում է գազի փոխադրման այն ծավալը, որը կարող է ընդհատվել փոխադրման համակարգի օպերատորի կողմից՝ փոխադրման պայմանագրով նախատեսված պայմաններով,

- 14) «երկարաժամկետ ծառայություններ» նշանակում է ծառայություններ, որոնք առաջարկվում են փոխադրման համակարգի օպերատորի կողմից մեկ կամ ավելի տարով,
- 15) «կարճաժամկետ ծառայություններ» նշանակում է ծառայություններ, որոնք փոխադրման համակարգի օպերատորն առաջարկում է մեկ տարի ժամկետից պակաս ժամանակով,
- 16) «հաստատուն թողունակություն» նշանակում է գազի փոխադրման այն թողունակությունը, որը պայմանագրով երաշխավորված է որպես փոխադրման համակարգի օպերատորի կողմից չընդհատվող,
- 17) «մշտական ծառայություններ» նշանակում է ծառայություններ, որոնք առաջարկում է փոխադրման համակարգի օպերատորը՝ կապված հաստատուն թողունակությունների հետ,
- 18) «տեխնիկական հնարավորություն» նշանակում է հաստատուն թողունակության այն առավելագույն քանակը, որ փոխադրման համակարգի օպերատորը կարող է առաջարկել ցանցի օգտագործողներին՝ հաշվի առնելով համակարգի ամբողջականությունն ու փոխադրման ցանցի աշխատանքային պահանջները,
- 19) «պայմանագրով նախատեսված թողունակություն» նշանակում է այն թողունակությունը, որը փոխադրման համակարգի օպերատորը փոխադրման պայմանագրով բաշխում է ցանցի օգտագործողին,
- 20) «հասանելի թողունակություն» նշանակում է տեխնիկական հնարավորության այն մասը, որը չի բաշխվել և տվյալ պահին դեռ մատչելի է համակարգին,
- 21) «պայմանագրային գերբեռնվածություն» նշանակում է մի իրավիճակ, որտեղ հաստատուն թողունակության պահանջարկի մակարդակը գերազանցում է տեխնիկական հնարավորությունները,
- 22) «առաջնային շուկա» նշանակում է որոշակի թողունակության համար նախատեսված շուկա, որտեղ թողունակության առուվաճառքը կազմակերպվում է անմիջապես փոխադրման համակարգի օպերատորի կողմից,
- 23) «ֆիզիկական գերբեռնվածություն» նշանակում է մի իրավիճակ, երբ իրական առաքումների պահանջարկի մակարդակը ժամանակի որևէ հատվածում գերազանցում է տեխնիկական հնարավորությունները,

24) «ՀԲԳ կայանի թողունակություն» նշանակում է ՀԲԳ տերմինալում բնական գազի հեղուկացման կամ ՀԲԳ ներկրման, բեռնաթափման, օժանդակ ծառայությունների, ժամանակավոր պահեստավորման և վերագազաֆիկացման հնարավորություն,

25) «տարածություն» նշանակում է գազի այն ծավալը, որը պահեստարանի օգտագործողն իրավասու է օգտագործել գազը պահեստավորելու համար,

26) «բաժանորդին բնական գազ առաքելու ունակություն» նշանակում է գազի այն քանակը, որը պահեստարանի օգտագործողն իրավասու է արտամղել պահեստարանից,

27) «ներմղելիություն» նշանակում է գազի այն քանակը, որը պահեստարանի օգտագործողն իրավասու է ներմղել պահեստարան,

28) «պահեստավորման տարողություն» նշանակում է տարածության, ներմղելիության և բաժանորդին գազ առաքելու ունակության ցանկացած համակցություն:

2. Չհակասելով սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված սահմանումներին՝ 2009/73/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածում ընդգրկված սահմանումները, որոնք համապատասխանում են սույն Կանոնակարգի կիրառմանը, նույնպես կիրառվում են՝ բացառությամբ այդ հոդվածի 3-րդ կետում նշված փոխադրման սահմանման:

3. Սույն հոդվածի 1-ին պարբերության 3-23-րդ կետերում նշված՝ փոխադրման վերաբերյալ սահմանումները համանման եղանակով կիրառվում են պահեստարանների և ՀԲԳ կայանների նկատմամբ:

Հոդված 3

Փոխադրման համակարգի օպերատորների հաստատումը

1. Հանձնաժողովը պետք է ուսումնասիրի փոխադրման համակարգի օպերատորի հաստատման մասին որոշման վերաբերյալ ցանկացած ծանուցում՝ ինչպես նշված է 2009/73/ԵՀ հրահանգի 10(6) հոդվածում՝ անմիջապես ստանալուց հետո: Այդ ծանուցումն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում Հանձնաժողովը պետք է համապատասխան

ազգային կարգավորման մարմնին ներկայացնի 2009/73/ԵՀ կանոնակարգի 10(2) կամ 11-րդ և 9-րդ հոդվածների հետ դրա համապատասխանության վերաբերյալ իր եզրակացությունը:

Առաջին ենթապարբերության մեջ նշվածի վերաբերյալ եզրակացությունը պատրաստելիս Հանձնաժողովը կարող է Գործակալությանը խնդրել իրեն տրամադրել ազգային կարգավորման մարմնի կայացրած որոշման վերաբերյալ իր եզրակացությունը: Նման դեպքում առաջին ենթապարբերության մեջ նշված երկամսյա ժամկետը պետք է երկարաձգվի ևս երկու ամսով:

Հանձնաժողովի եզրակացության բացակայության դեպքում համարվում է, որ առաջին և երկրորդ ենթապարբերություններում նշված ժամանակահատվածներում Հանձնաժողովը չպետք է կարգավորման մարմնի կայացրած որոշման վերաբերյալ առարկություններ բարձրացնի:

2. Հանձնաժողովի կողմից եզրակացությունը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում ազգային կարգավորման մարմինը պետք է վերջնական որոշում ընդունի՝ կապված փոխադրման համակարգի օպերատորի հաստատման հետ՝ առավելագույնս ուշադրություն դարձնելով այդ եզրակացությանը: Կարգավորող մարմնի որոշումը և Հանձնաժողովի եզրակացությունը պետք է հրապարակվեն միասին:

3. Ընթացակարգի ընթացքում ցանկացած պահի կարգավորող մարմինները և (կամ) Հանձնաժողովը կարող են արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ իրականացնող փոխադրման համակարգի օպերատորից և (կամ) գազի բնագավառում տնտեսավարող սուբյեկտից պահանջել իրենց առաջադրանքների կատարման հետ կապված ցանկացած տեղեկություն՝ համաձայն սույն հոդվածի:

4. Կարգավորման մարմինները և Հանձնաժողովը պետք է պահպանեն առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը:

5. Հանձնաժողովը կարող է ընդունել սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների կիրառման համար անհրաժեշտ ընթացակարգի մանրամասները սահմանող ուղեցույցներ: Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 28(2) հոդվածում նշված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

6. Եթե Հանձնաժողովը փոխադրման համակարգի օպերատորի հաստատման վերաբերյալ ծանուցում է ստացել, համաձայն 2009/73/ԵՀ հրահանգի 9(10) հոդվածի, ապա

Հանձնաժողովը պետք է հաստատման վերաբերյալ որոշում կայացնի: Կարգավորող մարմինը պետք է կատարի Հանձնաժողովի որոշումը:

Հոդված 4

Գազի փոխադրման համակարգի օպերատորների եվրոպական ցանցը

Փոխադրման համակարգի բոլոր օպերատորները պետք է Գազի ՓՀՕԵՑ-ի միջոցով համագործակցեն Համայնքի մակարդակով՝ խթանելու համար բնական գազի ներքին շուկայի և միջսահմանային առևտրի մրցակցությունն ու գործունեությունը և ապահովելու համար բնական գազի փոխադրման ցանցի օպտիմալ կառավարումը, համակարգված գործունեությունն ու տեխնիկական գնահատումը:

Հոդված 5

Գազի ՓՀՕԵՑ-ի սահմանումը

1. Մինչև 2011 թվականի մարտի 3-ը գազի փոխադրման համակարգի օպերատորները պետք է Հանձնաժողովին և Գործակալությանը ներկայացնեն կանոնադրության նախագիծը, անդամների ցանկը և ընթացակարգային նախնական կանոնները՝ ներառյալ այլ շահագրգիռ կողմերի, սահմանվող Գազի ՓՀՕԵՑ-ի հետ խորհրդակցությանն առնչվող ընթացակարգային կանոնները:
2. Վերևում թվարկվածը ստանալուց հետո երկու ամիսների ընթացքում Գործակալությունը, շահագրգիռ բոլոր կողմերին ներկայացնող կազմակերպությունների հետ՝ մասնավորապես համակարգի օգտագործողների՝ ներառյալ բաժանորդներին, պաշտոնապես խորհրդակցելուց հետո, պետք է Հանձնաժողովին ներկայացնի կանոնադրության նախագծի, անդամների ցանկի և ընթացակարգային նախնական կանոնների վերաբերյալ իր եզրակացությունը:
3. Հանձնաժողովը պետք է եզրակացություն կայացնի կանոնադրության նախագծի, անդամների ցանկի և ընթացակարգային նախնական կանոնների վերաբերյալ՝ հաշվի առնելով 2-րդ պարբերության մեջ նշված Գործակալության եզրակացությունը, այդ Գործակալության եզրակացությունը ստանալուց հետո երեք ամիսների ընթացքում:

4. Հանձնաժողովի եզրակացությունը ստանալուց հետո երեք ամիսների ընթացքում փոխադրման համակարգի օպերատորները պետք է սահմանեն Գազի ՓՀՕԵՑ-ը, ընդունում և հրապարակում են դրա կանոնադրությունն ու ընթացակարգային կանոնները:

Հոդված 6

Ցանցի ծածկագրերի ստեղծումը

1. Հանձնաժողովը, Գործակալության, Գազի ՓՀՕԵՑ-ի և համապատասխան այլ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելուց հետո, պետք է կազմի տարեկան առաջնահերթության ցանկ, որտեղ նշվում են 8(6) հոդվածով նախատեսված ոլորտները, որոնք պետք է ընդգրկվեն ցանցի ծածկագրերի մշակման գործում:

2. Հանձնաժողովը պետք է Գործակալությունից պահանջի վեց ամիսը չգերազանցող ողջամիտ ժամկետներում ներկայացնել առաջնահերթության ցանկում նշված ոլորտներին վերաբերող ցանցերի ծածկագրերի մշակման համար անհրաժեշտ հստակ և անաչառ սկզբունքները սահմանող ոչ պարտադիր շրջանակային ուղեցույց (շրջանակային ուղեցույց)՝ համաձայն 8(7) հոդվածի: Յուրաքանչյուր շրջանակային ուղեցույցը պետք է նպաստի խտրականության բացառմանը, շուկայի արդյունավետ մրցակցությանն ու որակյալ գործունեությանը: Գործակալության կողմից ստացված հիմնավորված խնդրանքի հիման վրա Հանձնաժողովը կարող է երկարաձգել ժամկետը:

3. Գործակալությունը, երկու ամիսից ոչ պակաս ժամկետներում, պետք է պաշտոնապես խորհրդակցի Գազի ՓՀՕԵՑ-ի և շրջանակային ուղեցույցով հետաքրքրվող այլ համապատասխան անձանց հետ՝ բաց և թափանցիկ ձևով:

4. Եթե Հանձնաժողովը համարի, որ շրջանակային ուղեցույցը չի նպաստում խտրականության բացառմանը, շուկայի արդյունավետ մրցակցությանն ու որակյալ գործունեությանը, այն կարող է Գործակալությունից պահանջել ողջամիտ ժամկետներում վերանայել շրջանակային ուղեցույցը և այն վերաներկայացնել Հանձնաժողովին:

5. Եթե Գործակալությանը չի հաջողվում շրջանակային ուղեցույց ներկայացնել կամ վերաներկայացնել 2-րդ կամ 4-րդ պարբերությունների համաձայն Հանձնաժողովի կողմից նախատեսված ժամկետներում, ապա Հանձնաժողովը պետք է տվյալ շրջանակային ուղեցույցն ինքը մշակի:

6. Հանձնաժողովը պետք է Գազի ՓՀՕԵՑ-ից պահանջի 12 ամիսը չգերազանցող ողջամիտ ժամկետում Գործակալությանը ներկայացնել ցանցի ծածկագիր, որը համապատասխանում է համապատասխան շրջանակային ուղեցույցին:

7. Ցանցի ծածկագիրը ստանալուց հետո եռամսյա ժամկետում, որի ընթացքում Գործակալությունը կարող է պաշտոնապես խորհրդակցել համապատասխան շահագրգիռ կողմերի հետ, Գործակալությունը պետք է Գազի ՓՀՕԵՑ-ին ցանցի ծածկագրի վերաբերյալ հիմնավորված եզրակացություն տրամադրի:

8. Գազի ՓՀՕԵՑ-ը կարող է փոփոխել ցանցի ծածկագիրը՝ ելնելով Գործակալության եզրակացությունից, և վերաներկայացնել այն Գործակալությանը:

9. Եթե Գործակալությունը համոզվում է, որ ցանցի ծածկագիրը համապատասխանում է համապատասխան շրջանակային ուղեցույցին, ապա այն պետք է ցանցի ծածկագիրը ներկայացնի Հանձնաժողովին և կարող է խորհուրդ տալ, որ այն ընդունվի ողջամիտ ժամկետներում: Հանձնաժողովը պետք է այդ կապակցությամբ ներկայացնի ցանցի ծածկագիրը չընդունելու իր պատճառները:

10. Եթե Գազի ՓՀՕԵՑ-ին չի հաջողվել 6-րդ պարբերության համաձայն Հանձնաժողովի կողմից նախատեսված ժամկետներում մշակել ցանցի ծածկագիրը, Հանձնաժողովը կարող է պահանջել, որպեսզի Գործակալությունը ցանցի ծածկագրի նախնական տարբերակը մշակի համապատասխան շրջանակային ուղեցույցի հիման վրա: Գործակալությունը կարող է ցանցի ծածկագրի նախնական տարբերակը պատրաստելու ընթացքում հետագա խորհրդակցություն նախաձեռնել՝ համաձայն սույն պարբերության: Գործակալությունը պետք է սույն պարբերության համաձայն պատրաստված ցանցի ծածկագրի նախնական տարբերակը ներկայացնի Հանձնաժողովին և կարող է խորհուրդ տալ ընդունելու այն:

11. Հանձնաժողովը կարող է, իր սեփական նախաձեռնությամբ, եթե Գազի ՓՀՕԵՑ-ը չի հաջողեցրել ցանցի ծածկագիր մշակել կամ եթե Գործակալությունը ձախողել է սույն հոդվածի 10-րդ պարբերության մեջ նշված ցանցի ծածկագրի նախնական տարբերակը մշակելը, կամ սույն հոդվածի 9-րդ պարբերության համաձայն, Գործակալության խորհրդով ընդունել 8(6) հոդվածում թվարկված ոլորտներում ցանցի մեկ կամ ավելի ծածկագրեր:

12. Եթե Հանձնաժողովն իր սեփական նախաձեռնությամբ առաջարկում է ընդունել ցանցի ծածկագիրը, Հանձնաժողովը երկու ամսից ոչ պակաս ժամանակահատվածում խորհրդակցում է Գործակալության, Գազի ՓՀՕԵՑ-ի և ցանցի ծածկագրով հետաքրքրված բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու

համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 28(2) հոդվածում նշված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

13. Սույն հոդվածը չպետք է հակասի Հանձնաժողովի՝ 23-րդ հոդվածում նշված ուղեցույցներն ընդունելու և փոփոխելու իրավունքին:

Հոդված 7

Ցանցի ծածկագրերի փոփոխությունները

1. 6-րդ հոդվածի համաձայն ընդունված ցանցի ցանկացած ծածկագրի փոփոխությունների նախագիծի վերաբերյալ կարող է առաջարկ ներկայացվել Գործակալությանը այն անձանց կողմից, ովքեր հավանաբար հետաքրքրություն են ցուցաբերում այդ ցանցի ծածկագրի նկատմամբ՝ ներառյալ Գազի ՓՀՕԵՑ-ը, փոխադրման համակարգի օպերատորները, ցանցի օգտագործողներն ու բաժանորդները: Գործակալությունը կարող է փոփոխություններ կատարելու առաջարկ ներկայացնել նաև իր սեփական նախաձեռնությամբ:

2. Գործակալությունը, թիվ 713/2009 (ԵՀ) կանոնակարգի 10-րդ հոդվածի համաձայն, պետք է խորհրդակցի բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Այս գործընթացից հետո Գործակալությունը կարող է փոփոխությունների վերաբերյալ հիմնավորված առաջարկություններ անել Հանձնաժողովին՝ բացատրելով, թե այդ առաջարկություններն ինչպես են համապատասխանում սույն Կանոնակարգի 6(2) հոդվածով սահմանված ցանցի ծածկագրերի նպատակներին:

3. Հանձնաժողովը, հաշվի առնելով Գործակալության առաջարկները, կարող է ընդունել 6-րդ հոդվածի համաձայն ընդունված որևէ ցանցի ծածկագրի փոփոխությունները: Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 28(2) հոդվածում նշված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

4. Առաջարկված փոփոխությունների՝ 28(2) հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն իրականացվող քննարկումը պետք է սահմանափակվի առաջարկված փոփոխության հետ առնչվող ասպեկտների քննարկմամբ: Այդ առաջարկված փոփոխությունները չեն հակասում այլ փոփոխություններին, որ Հանձնաժողովը կարող է առաջարկել:

Հողված 8

Գազի ՓՀՕԵՑ-ի խնդիրները

1. Գազի ՓՀՕԵՑ-ը սույն հողվածի 6-րդ պարբերության մեջ նշված ոլորտներում մշակում է ցանցի ծածկագրեր՝ ելնելով Հանձնաժողովի կողմից իրեն ուղղված պահանջից՝ համաձայն 6(6) հողվածի:

2. Գազի ՓՀՕԵՑ-ը կարող է 6-րդ պարբերության մեջ նշված վայրերում ցանցի ծածկագրեր մշակել՝ նպատակ ունենալով իրականացնելու 4-րդ հողվածում նշված նպատակները, եթե այս ցանցի ծածկագրերը չեն համապատասխանում Հանձնաժողովի կողմից իրեն հասցեագրված պահանջի շրջանակներում ընդգրկված ոլորտներին: Այս ցանցի ծածկագրերը պետք է եզրակացություն կազմելու նպատակով ներկայացվեն Գործակալությանը: Այդ եզրակացությունը պետք է մանրամասն հաշվի առնվի Գազի ՓՀՕԵՑ-ը կողմից:

3. Գազի ՓՀՕԵՑ-ը պետք է ընդունի հետևյալը՝

ա) ցանցի աշխատանքի ընդհանուր գործիքներ՝ ապահովելու համար ցանցի համակարգումը նորմալ և արտակարգ իրավիճակներում՝ ներառյալ ընդհանուր միջադեպերի դասակարգման սանդղակն ու հետազոտության ծրագրերը,

բ) Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման տասնամյա ոչ պարտադիր նախագիծ (Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման նախագիծ)՝ ներառյալ եվրոպական մատակարարման համարժեքության հեռանկարը՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ,

գ) առաջարկություններ, որոնք վերաբերում են Համայնքի և երրորդ երկրի փոխադրման համակարգի օպերատորների միջև տեխնիկական համագործակցության համախմբմանը,

դ) տարեկան աշխատանքային ծրագիր,

ե) տարեկան հաշվետվություն,

զ) ամառային և ձմեռային մատակարարման տարեկան հեռանկարներ:

4. 3-րդ պարբերության (բ) կետում նշված եվրոպական մատակարարման համարժեքության հեռանկարն ընդգրկում է գազի ներկայիս և նախատեսված պահանջարկը բավարարելու համար գազի համակարգի ընդհանուր համապատասխանությունը հաջորդ հինգ տարիների, ինչպես նաև այդ հեռանկարի ամսաթվից սկսած հինգից տասը տարիների միջև ընկած ժամանակահատվածի համար: Եվրոպական մատակարարման համարժեքության

հեռանկարը պետք է հիմնվի փոխադրման համակարգի յուրաքանչյուր անհատ օպերատորի կողմից կազմվող ազգային մատակարարման հեռանկարի հիման վրա:

5. 3-րդ պարբերության (դ) կետում նշված տարեկան աշխատանքային ծրագիրը պետք է պարունակի պատրաստվելիք ցանցի ծածկագրերի ցանկն ու նկարագրությունը, ցանցի գործարկումը համակարգելու նախագիծը, ինչպես նաև հետազոտության և զարգացման գործողություններ, որոնք պետք է իրականացվեն այդ տարվա ընթացքում, և ինդիկատիվ օրացույց:

6. 1-ին և 2-րդ պարբերություններում նշված ցանցի ծածկագրերը պետք է ընդգրկեն հետևյալ ոլորտները՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով տարածաշրջանային հատուկ առանձնահատկությունները՝

ա) ցանցային անվտանգություն և հավաստիության կանոններ,

բ) ցանցային միացումների վերաբերյալ կանոններ,

գ) երրորդ կողմի մատչելիության կանոններ,

դ) տվյալների փոխանակման և կարգավորման կանոններ,

ե) փոխգործողության կանոններ,

զ) գործառնական ընթացակարգեր արտակարգ իրավիճակներում,

է) թողունակության բաշխման և գերբեռնվածության կառավարման կանոններ,

ը) ցանցի մատչելիությունն ապահովող ծառայությունների և համակարգի հավասարակշռության տեխնիկական և գործառնական ապահովման վերաբերյալ առուվաճառքի կանոններ,

թ) թափանցիկության վերաբերյալ կանոններ,

ժ) ծառայությունների մատուցման վերաբերյալ կանոններ՝ ներառյալ ցանցի հետ կապված կանոնները, որոնք վերաբերում են հայտերի ընթացակարգին, կանոններ ծառայությունները չմատուցելու դեպքում գանձվող վճարների վերաբերյալ և կանոններ փոխադրման համակարգի օպերատորների համակարգերի միջև աշխատանքների հավասարաչափ բաշխման վերաբերյալ,

ժա) կանոններ փոխադրման սակագների ներդաշնակեցված կառուցվածքների վերաբերյալ
և

Ժբ) էներգասարդյունավետություն՝ կապված գազատար ցանցերի հետ:

7. Ցանցի ծածկագրերը պետք է մշակվեն՝ ելնելով միջսահմանային ցանցի խնդիրներից և շուկայի ինտեգրմանը վերաբերող խնդիրներից և չպետք է հակասեն անդամ պետությունների՝ ազգային ցանցի ծածկագրեր հաստատելու իրավունքին, որոնք չեն ազդում միջսահմանային առևտրի վրա:

8. Գազի ՓՀՕԵՑ-ը պետք է դիտանցի և վերլուծի ցանցի ծածկագրերի և 6(11) հոդվածի համաձայն Հանձնաժողովի կողմից ընդունված ուղեցույցների իրականացումը և դրանց ազդեցությունները շուկայի ինտեգրմանն ուղղված կիրառելի կանոնների ներդաշնակեցման վրա: Գազի ՓՀՕԵՑ-ը պետք է Գործակալությանը զեկուցի իր ձեռք բերած արդյունքների մասին և ներառի սույն հոդվածի 3-րդ պարբերության (ե) կետում նշված տարեկան հաշվետվության վերլուծության արդյունքները:

9. Գազի ՓՀՕԵՑ-ը պետք է մատչելի դարձնի Գործակալության պահանջած ամբողջ տեղեկությունները՝ իր առաջադրանքները 9(1) հոդվածի համաձայն իրականացնելու համար:

10. Գազի ՓՀՕԵՑ-ը պետք է յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ ընդունի և հրապարակի 3-րդ պարբերության (բ) կետում նշված Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման նախագիծը: Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման նախագիծը պետք է ընդգրկի ինտեգրված ցանցի մոդելավորումը, սցենարի զարգացումը, Եվրոպական մատակարարման համարժեքության հեռանկարը և համակարգի ճկունության գնահատումը:

11. Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման նախագիծը պետք է, մասնավորապես,

ա) ներդրումներ կատարելու պլաններ կազմի՝ հաշվի առնելով 12(1) հոդվածում նշված տարածաշրջանային ներդրումների նախագծերը և, անհրաժեշտության դեպքում, ցանցերի պլանավորման Համայնքային ասպեկտները՝ ներառյալ անդրեվրոպական էներգացանցերին ուղղված ուղեցույցները՝ համաձայն Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1364/2006/ԵՀ որոշման (9),

բ) կապված միջսահմանային փոխմիացումների հետ՝ հիմնվի նաև ցանցի տարբեր օգտագործողների ողջամիտ կարիքների հիման վրա և 2009/73/ԵՀ հրահանգի 14-րդ և 22-րդ հոդվածներում նշված ներդրողներից ինտեգրի երկարաժամկետ պարտավորություններ և

գ) բացահայտի ներդրումների բացերը՝ մասնավորապես նրանք, որոնք կապված են միջսահմանային փոխմիացումների թողունակությունների հետ:

Ինչ վերաբերում է երկրորդ ենթապարբերության (գ) կետին, թույլտվության տարբեր ընթացակարգերից և գործողություններից ծագող ցանցի միջսահմանային փոխմիացումների թողունակությունների ընդլայնման առջև ծառայած խոչընդոտների վերանայումը կարող է կցվել Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման նախագծին:

12. Գործակալությունը պետք է վերանայի ցանցի զարգացման ազգային տասնամյա ծրագրերը՝ գնահատելու համար դրանց համապատասխանությունը Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագրին: Եթե Գործակալությունը անհամապատասխանություններ է նկատում ցանցի զարգացման ազգային տասնամյա ծրագրի և Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագրի միջև, այն պետք է առաջարկի փոփոխություններ կատարել կամ ցանցի զարգացման ազգային տասնամյա ծրագրում կամ Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագրում՝ ըստ անհրաժեշտության: Եթե ցանցի զարգացման ազգային տասնամյա այդ ծրագիրը մշակվում է 2009/73/ԵՀ հրահանգի 22-րդ հոդվածի համաձայն, ապա Գործակալությունը պետք է առաջարկի, որ ազգային կարգավորող իրավասու մարմինը փոփոխություններ կատարի ցանցի զարգացման ազգային տասնամյա ծրագիրում՝ համաձայն այդ հրահանգի 22(7) հոդվածի, և այդ մասին տեղեկացնի Հանձնաժողովին:

13. Հանձնաժողովի պահանջով Գազի ՓՀՕԵՑ-ը պետք է 23-րդ հոդվածում նշված Ուղեցույցների ընդունման վերաբերյալ իր տեսակետները ներկայացնի Հանձնաժողովին:

Հոդված 9

Գործակալության կողմից իրականացվող դիտանցումը

1. Գործակալությունը պետք է դիտանցի Գազի ՓՀՕԵՑ-ի կողմից՝ 8(1), (2) և (3) հոդվածով նախատեսված խնդիրների իրականացումը:

2. Գործակալությունը պետք է դիտանցի Գազի ՓՀՕԵՑ-ի կողմից 8(2) հոդվածի համաձայն մշակված ցանցի ծածկագրերի և այն ցանցի ծածկագրերի իրականացումը, որոնք մշակվել

են 6(1)–ից (10) հողվածի համաձայն, սակայն որոնք չեն ընդունվել Հանձնաժողովի կողմից՝ համաձայն 6(11) հողվածի:Եթե Գազի ՓՀՕԵՑ–ին չի հաջողվել իրականացնել այդ ցանցի ծածկագրերը, ապա Գործակալությունը Գազի ՓՀՕԵՑ–ից պահանջում է պատշաճ ձևով հիմնավորված բացատրություն տրամադրել, թե ինչու է նա ձախողել ծածկագրերի իրականացումը:Գործակալությունը պետք է Հանձնաժողովին տեղեկացնի այդ բացատրության մասին և ներկայացնի այդ մասին իր եզրակացությունն:

3. Գործակալությունը պետք է դիտանցի և վերլուծի ցանցի ծածկագրերի և, ինչպես նշված է 6(11) հողվածում, Հանձնաժողովի կողմից ընդունված ուղեցույցների իրականացումը և դրանց ազդեցությունը շուկայի ինտեգրումը խթանելուն ուղղված կիրառվող կանոնների ներդաշնակեցման վրա, ինչպես նաև շուկայի՝ խտրականությունը բացառող, էֆեկտիվ մրցակցությամբ և արդյունավետ գործունեության վրա և այդ մասին զեկուցի Հանձնաժողովին:

4. Գազի ՓՀՕԵՑ–ը պետք է Գործակալությանը ներկայացնի Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման նախնական ծրագիրը, տարեկան աշխատանքային ծրագրի նախագիծը՝ ներառյալ խորհրդատվական գործընթացի վերաբերյալ տեղեկությունները և 8(3) հողվածում նշված այլ փաստաթղթեր՝ նրա եզրակացությունը ստանալու համար:

5. Ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում Գործակալությունը պետք է պատշաճ ձևով հիմնավորված եզրակացություն, ինչպես նաև առաջարկներ տրամադրի Գազի ՓՀՕԵՑ–ին և Հանձնաժողովին, եթե այն համարում է, որ Գազի ՓՀՕԵՑ–ի կողմից ներկայացված տարեկան աշխատանքային ծրագրի նախագիծը կամ Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման նախնական ծրագիրը չեն նպաստում շուկայի՝ խտրականությունը բացառող, էֆեկտիվ մրցակցությամբ և արդյունավետ գործունեությանը կամ երրորդ կողմի համար մատչելի միջսահմանային փոխմիացումների բավարար մակարդակին:

Հողված 10

խորհրդատվությունները

1. 8(1), (2) և (3) հողվածում նշված ցանցի ծածկագրերը, Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման նախնական ծրագիրը և տարեկան աշխատանքային ծրագրի նախագիծը պատրաստելիս Գազի ՓՀՕԵՑ–ը պետք է վաղ փուլում և թափանցիկ ձևով խորհրդատվական լայնածավալ գործընթաց իրականացնի՝ ներառյալ շուկայի

համապատասխան բոլոր մասնակիցները և, մասնավորապես, բոլոր շահագրգիռ կողմերին ներկայացնող կազմակերպությունները՝ համաձայն 5(1) հոդվածում նշված ընթացակարգային կանոնների: Այդ խորհրդատվությունը պետք է ընդգրկի նաև ազգային կարգավորման մարմիններին և ազգային այլ մարմիններին, մատակարարող և արտադրող ձեռնարկությունների, ցանցի օգտագործողների՝ ներառյալ բաժանորդները, բաշխման համակարգի օպերատորների՝ ներառյալ համապատասխան արդյունաբերական ասոցիացիաները, տեխնիկական մարմինները և շահագրգիռ անձանց պլատֆորմները: Այն պետք է նպատակաուղղված լինի որոշում կայացնելու ընթացում համապատասխան բոլոր մարմինների տեսակետների ու առաջարկների նույնականացմանը:

2. 1-ին պարբերության մեջ նշված խորհրդատվության վերաբերյալ բոլոր փաստաթղթերն ու արձանագրությունները պետք է հրապարակվեն:

3. Նախքան 8(1), (2) և (3) հոդվածում նշված տարեկան աշխատանքային ծրագիրն ու ցանցի ծածկագրերն ընդունելը Գազի ՓՀՕԵՑ-ը նշում է, թե խորհրդատվության ընթացքում ստացված դիտարկումներն ինչպես են հաշվի առնվել: Այն պետք է նշի պատճառները, եթե դիտարկումները հաշվի չեն առնվել:

Հոդված 11

Ծախսերը

4-12-րդ հոդվածներում նշված Գազի ՓՀՕԵՑ-ի գործողությունների հետ կապված ծախսերը կրում են փոխադրման համակարգի օպերատորները, և այդ ծախսերը հաշվի են առնվում սակագները հաշվարկելիս: Կարգավորող մարմինները պետք է այդ ծախսերը հաստատում են միայն այն դեպքում, երբ դրանք հիմնավորված են և համաչափ:

Հոդված 12

Փոխադրման համակարգի օպերատորների տարածաշրջանային համագործակցությունը

1. Փոխադրման համակարգի օպերատորները պետք է տարածաշրջանային համագործակցություն հաստատեն Գազի ՓՀՕԵՑ-ի շրջանակում՝ խթանելու համար 8(1), (2) և (3) հոդվածում նշված առաջադրանքների իրականացմանը: Մասնավորապես,

յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ նրանք պետք է տարածաշրջանային ներդրումների նախագիծ հրապարակեն և կարող են ներդրումների վերաբերյալ որոշումներ կայացնել՝ հիմնվելով տարածաշրջանային ներդրումների ծրագրի հիման վրա:

2. Փոխադրման համակարգի օպերատորները պետք է խթանեն գործնական միջոցառումները՝ ապահովելու համար ցանցի օպտիմալ կառավարումը և խթանեն էներգափոխանակման զարգացումը, խտրականությունը բացառող շուկայական լուծումների միջոցով միջսահմանային փոխմիացումների թողունակությունների համակարգված բաշխմանը՝ պատշաճ ուշադրություն դարձնելով կարճաժամկետ բաշխումների համար ենթադրվող աճուրդների հատուկ բնույթին և ծառայությունների մատուցման մեխանիզմների ինտեգրմանը:

3. 1-ին և 2-րդ պարբերություններում նշված նպատակներին հասնելու համար յուրաքանչյուր տարածաշրջանային համագործակցության կառուցվածքի շրջանակում գտնվող աշխարհագրական տարածքը կարող է որոշվել Հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով գոյություն ունեցող տարածաշրջանային համագործակցության կառուցվածքները: Յուրաքանչյուր անդամ պետության պետք է թույլատրվի համագործակցություն խթանել ավելի, քան մեկ աշխարհագրական տարածքում: Առաջին նախադասության մեջ նշված լրացումների միջոցով սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 28(2) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն պարունակող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

4. Այդ նպատակով Հանձնաժողովը պետք է խորհրդակցի Գործակալության և Գազի ՓՀՕԵՅ-ի հետ:

Հոդված 13

Ցանցերի մատչելիության համար նախատեսվող սակագները

1. Դրանք հաշվարկելու համար փոխադրման համակարգի օպերատորների կողմից կիրառվող և 2009/73/ԵՀ հրահանգի 41(6) հոդվածի համաձայն կարգավորող մարմինների կողմից հաստատված սակագները կամ մեթոդաբանությունները պետք է լինեն թափանցիկ,

հաշվի առնեն համակարգի ինտեգրման և դրա բարելավման կարիքը և արտացոլեն իրականում կատարված ծախսերն այնքանով, որքանով որ այդ ծախսերը համապատասխանում են արդյունավետ և կառուցվածքայնորեն համեմատելի ցանցի օպերատորի կատարած ծախսերին և թափանցիկ են՝ միաժամանակ ներառելով պատշաճ փոխհատուցում ներդրումների դիմաց և, անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով կարգավորող մարմինների կողմից սակագների հենանշումը: Դրանք հաշվարկելու համար սակագները կամ մեթոդաբանությունները պետք է կիրառվեն խտրականությունը բացառող ձևով:

2. Անդամ պետությունները կարող են որոշել, որ սակագները կարող են նույնպես որոշվել շուկայական գործիքների միջոցով՝ պայմանով, որ այդ գործիքներն ու դրանցից ստացվող եկամուտները հաստատվեն կարգավորող մարմնի կողմից:

3. Դրանք հաշվարկելու համար սակագները կամ մեթոդաբանությունները պետք է դյուրացնեն գազի արդյունավետ առևտուրն ու մրցակցությունը՝ միևնույն ժամանակ խուսափելով ցանցի օգտագործողների միջև խաչաձև սուբսիդավորումից, տրամադրելով դրդապատճառներ ներդրումների համար և պահպանելով կամ ստեղծելով փոխգործողություններ փոխադրման ցանցերի համար:

4. Ցանցի օգտագործողների համար նախատեսված սակագները պետք է լինեն խտրականությունը բացառող և սահմանվեն փոխադրման համակարգի մուտքի և ելքի կետերի համար առանձին: Մուտքի և ելքի կետերի ծախսերի բաշխման մեխանիզմների և քանակի սահմանման մեթոդաբանությունը պետք է հաստատվի ազգային կարգավորող մարմինների կողմից: Մինչև 2011 թվականի սեպտեմբերի 3-ը անդամ պետությունները պետք է ապահովեն, որ անցումային ժամանակահատվածից հետո ցանցի համար գանձվող վճարները չպետք է հաշվարկվեն գազի փոխադրման համար պայմանագրով հստակ սահմանված թողունակության հիման վրա:

5. Ցանցի մատչելիության համար նախատեսվող սակագները չպետք է սահմանափակեն ոչ շուկայի իրացվելիությունը ոչ էլ խաթարեն փոխադրման տարբեր համակարգերի միջսահմանային առևտուրը: Եթե սակագնային կառուցվածքներում կամ ծառայությունների մատուցման մեխանիզմներում առկա տարբերությունները խոչընդոտում են փոխադրման համակարգերի միջև առևտրին, և անկախ 2009/73/ԵՀ հրահանգի 41(6) հոդվածից, փոխադրման համակարգի օպերատորները պետք է, համապատասխան ազգային մարմինների հետ սերտ համագործակցելով, ակտիվ կերպով հետևեն սակագնային

կառուցվածքների և վճարների գանձման սկզբունքների՝ ներառյալ հավասարակշռությունն ապահովող սկզբունքների համապատասխանեցմանը:

Հոդված 14

Երրորդ կողմի համար մատչելի ծառայությունները, որոնք վերաբերում են փոխադրման համակարգի օպերատորներին

1. Փոխադրման համակարգի օպերատորները պետք է՝

ա) ապահովեն, որ իրենք ցանցի բոլոր օգտագործողներին առաջարկում են ծառայություններ՝ հիմնված խտրականության բացառման հիման վրա,

բ) տրամադրեն երրորդ կողմի համար մատչելի, մշտական և ընդմիջվող ծառայություններ: Ընդհատվող թողունակությունների համար նախատեսված գումարը պետք է արտացոլի ընդհատումների հավանականությունը,

գ) ցանցի օգտագործողներին առաջարկի և երկարաժամկետ և կարճաժամկետ ծառայություններ:

Ինչ վերաբերում է առաջին ենթապարբերության (ա) կետին, երբ փոխադրման ցանցի օպերատորը միևնույն ծառայությունն առաջարկում է տարբեր բաժանորդների, այն պետք է այդպես անի համարժեք պայմանագրային ժամկետների և պայմանների ներքո՝ օգտագործելով կամ փոխադրման ներդաշնակեցված պայմանագրեր կամ ընդհանուր ցանցի ծածկագիր, որը հաստատված է իրավասու մարմնի կողմից՝ համաձայն 2009/73/ԵՀ հրահանգի 41-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի:

2. Փոխադրման պայմանագրերը, որոնք կնքվում են ոչ ստանդարտ մեկնարկային ամսաթվով կամ ավելի կարճ տևողությամբ, քան նախատեսվում է տարեկան ստանդարտ փոխադրման պայմանագրերի համար, չպետք է հանգեցնեն կամայականորեն բարձր կամ ցածր սակագների, որոնք չեն արտացոլում ծառայության շուկայական արժեքը՝ համաձայն 13(1) հոդվածով նախատեսված ընթացակարգի:

3. Անհրաժեշտության դեպքում, երրորդ կողմի համար մատչելի ծառայությունները կարող են տրամադրվել ցանցի օգտագործողների կողմից համապատասխան երաշխիքների առկայության դեպքում՝ հաշվի առնելով այդ օգտագործողների վարկարժանությունը: Այդ

երաշխիքները չպետք է շուկա մուտք գործելու համար անհարկի խոչընդոտներ ստեղծեն և պետք է լինեն խտրականությունը բացառող, թափանցիկ և համաչափ:

Հոդված 15

Երրորդ կողմի համար մատչելի ծառայությունները, որոնք վերաբերում են պահեստավորման և ՀԲԳ կայաններին

1. ՀԲԳ և պահեստավորման համակարգի օպերատորները պետք է՝

ա) խտրականության բացառման հիման վրա ցանցի բոլոր օգտագործողներին առաջարկեն ծառայություններ, որոնք համապատասխանում են շուկայի պահանջարկին. մասնավորապես, եթե ՀԲԳ կամ պահեստավորման համակարգի օպերատորը միևնույն ծառայությունն առաջարկում է տարբեր բաժանորդների, այն պետք է այդ անի համարժեք պայմանագրով նախատեսված ժամկետների և պայմանների սահմաններում,

բ) առաջարկեն ծառայություններ, որոնք համապատասխանում են գազի փոխադրման փոխմիացված համակարգերի շահագործմանը և փոխադրման համակարգի օպերատորների հետ համագործակցության միջոցով դյուրացնում են ցանցի մատչելիությունը և,

գ) համապատասխան տեղեկությունները՝ մասնավորապես ծառայություններից օգտվելու և դրանց մատչելիության վերաբերյալ տվյալները, դարձնեն հրապարակային այնպիսի ժամկետներում, որոնք համապատասխանում են ՀԲԳ կայանների կամ պահեստարանների օգտագործողների առևտրային ողջամիտ կարիքներին, որոնք ենթակա են ազգային կարգավորման մարմինների կողմից այդ հրապարակման դիտանցմանը:

2. Պահեստավորման համակարգի յուրաքանչյուր օպերատոր պետք է՝

ա) տրամադրի երրորդ կողմի համար մատչելի, մշտական և ընդմիջվող ծառայություններ. կարճատև ընդհատումներով ծառայությունների գինը պետք է արտացոլի ընդհատումների հավանականությունը,

բ) պահեստարանի օգտագործողներին առաջարկի և երկարաժամկետ և կարճաժամկետ ծառայություններ և

գ) պահեստարանի օգտագործողներին առաջարկի պահեստարանի տարածության, ներմղելիության և բաժանորդին գազ առաքելու ունակության համակցված և ոչ համակցված ծառայություններ:

3. ՀԲԳ կայանի և պահեստարանի վերաբերյալ պայմանագրերը չպետք է հանգեցնեն կամայականորեն բարձր սակագների այն դեպքերում, երբ դրանք նախապես սահմանված են՝

ա) բնական գազ մատակարարելու համար նախատեսված տարուց բացի այլ տարում և ոչ ստանդարտ մեկնարկային ամսաթվով կամ

բ) ավելի կարճ տևողությամբ, քան ՀԲԳ և պահեստարանի վերաբերյալ կնքված պայմանագրով նախատեսված ստանդարտ ժամկետն է՝ տարեկան կտրվածքով:

4. Անհրաժեշտության դեպքում, երրորդ կողմի համար մատչելի ծառայությունները կարող են տրամադրվել ցանցի օգտագործողների կողմից համապատասխան երաշխիքների առկայության դեպքում՝ հաշվի առնելով այդ օգտագործողների վարկարժանությունը: Այդ երաշխիքները չպետք է շուկա մուտք գործելու համար անհարկի խոչընդոտներ ստեղծեն և պետք է լինեն խտրականությունը բացառող, թափանցիկ և համաչափ:

5. ՀԲԳ կայանի թողունակության և պահեստարանի տարողության համար պահանջվող նվազագույն քանակի նկատմամբ կիրառվող պայմանագրային սահմանափակումները պետք է լինեն հիմնավորված տեխնիկական սահմանափակումների հիման վրա և պետք է թույլ տան ավելի փոքր պահեստարաններ օգտագործողներին հասանելիություն ձեռք բերել պահեստավորման ծառայությունների նկատմամբ:

Հոդված 16

Փոխադրման համակարգի օպերատորների իրավասություններ սահմաններում գտնվող թողունակությունների բաշխման մեխանիզմների և գերբեռնվածության կառավարման ընթացակարգերի սկզբունքները

1. 18(3) հոդվածում նշված համապատասխան բոլոր կետերում առավելագույն թողունակությունը պետք է մատչելի դարձվի շուկայի մասնակիցների համար՝ հաշվի առնելով համակարգի ամբողջականությունն ու ցանցի արդյունավետ աշխատանքը:

2. Փոխադրման համակարգի օպերատորը պետք է իրականացնի և հրապարակի թողունակությունների բաշխման՝ խտրականությունը բացառող և թափանցիկ մեխանիզմներ, որոնք պետք է՝

ա) տրամադրեն համապատասխան տնտեսական ազդանշաններ տեխնիկական հնարավորությունների արդյունավետ և առավելագույնս օգտագործման համար, նպաստեն նոր ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելուն և խթանեն բնական գազի միջսահմանային փոխանակմանը,

բ) համապատասխանեն շուկայական մեխանիզմներին՝ ներառյալ սփոթ շուկաները և առևտրի կենտրոնները՝ միաժամանակ լինեն ճկուն և ընդունակ լինեն հարմարվելու շուկայի զարգացող հանգամանքներին և

գ) համապատասխանեն անդամ պետությունների ցանցի մատչելիության համակարգերին:

3. Փոխադրման համակարգի օպերատորը պետք է իրականացնի և հրապարակի գերբեռնվածության կառավարման՝ խտրականությունը բացառող և թափանցիկ ընթացակարգեր, որոնք խթանում են բնական գազի միջսահմանային փոխանակմանը՝ խտրականության բացառման հիման վրա, և որոնք հիմնվում են հետևյալ սկզբունքների հիման վրա՝

ա) պայմանագրային գերբեռնվածության դեպքում փոխադրման համակարգի օպերատորը պետք է չօգտագործված թողունակությունն առաջարկի առաջնային շուկայում առնվազն մեկ օր առաջ և ընդհատելի հիմունքով,

բ) ցանցի օգտագործողները, ովքեր ցանկանում են վերավաճառել կամ վերապահել պայմանագրով իրենց տրված թողունակությունները երկրորդային շուկայում, պետք է իրավասու լինեն այդ անելու:

4. Կապված առաջին ենթապարբերության (բ) կետի հետ՝ անդամ պետությունը կարող է ցանցի օգտագործողներից ծանուցում կամ տեղեկություններ պահանջել փոխադրման համակարգի օպերատորի վերաբերյալ:

5. Ֆիզիկական գերբեռնվածության դեպքում փոխադրման համակարգի օպերատորը կամ, անհրաժեշտության դեպքում, կարգավորող մարմինները կիրառում են թողունակությունների բաշխման՝ խտրականությունը բացառող, թափանցիկ մեխանիզմներ:

6. Փոխադրման համակարգի օպերատորները պետք է կանոնավոր կերպով գնահատեն նոր ներդրումներ կատարելու շուկայական պահանջը: Նոր ներդրումներ պլանավորելիս փոխադրման համակարգի օպերատորները պետք է գնահատեն շուկայի պահանջարկը և հաշվի առնեն գազի անխափան մատակարարումը:

Հոդված 17

Պահեստարանների և ՀԲԳ կայանների թողունակության բաշխման մեխանիզմների և գերբեռնվածության կառավարման ընթացակարգերի սկզբունքները

1. Պահեստարանների և ՀԲԳ կայանների առավելագույն թողունակությունը պետք է մատչելի դարձվի շուկայի մասնակիցների համար՝ հաշվի առնելով համակարգի ամբողջականությունն ու աշխատանքը:

2. ՀԲԳ և պահեստավորման համակարգի օպերատորները պետք է իրականացնեն և հրապարակեն թողունակությունների բաշխման՝ խտրականությունը բացառող և թափանցիկ մեխանիզմներ, որոնք պետք է՝

ա) տրամադրեն համապատասխան տնտեսական ազդանշաններ հնարավորությունների արդյունավետ և առավելագույնս օգտագործման համար և նպաստեն նոր ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելուն,

բ) համապատասխանեն շուկայական մեխանիզմին՝ ներառյալ սփոթ շուկաները և առևտրի կենտրոնները՝ միաժամանակ լինեն ճկուն և ընդունակ լինեն հարմարվելու շուկայի զարգացող հանգամանքներին և

գ) համապատասխանեն միացված ցանցի մատչելիության համակարգերին:

3. ՀԲԳ և պահեստարանների վերաբերյալ կնքված պայմանագրերը պետք է ներառեն միջոցներ, որոնք կկանխեն թողունակությունների անհարկի կուտակումը՝ հաշվի առնելով հետևյալ սկզբունքները, որոնք կիրառվում են պայմանագրային գերբեռնվածության դեպքերում՝

ա) համակարգի օպերատորը պետք է ՀԲԳ կայանների և պահեստարանների չօգտագործված թողունակություններն առաջարկի առաջնային շուկայում՝ առանց հետաձգումների. պահեստարանների դեպքում այն պետք է առաջարկվի առնվազն մեկ օր առաջ և ընդհատելի հիմունքով,

բ) ՀԲԳ կայանների և պահեստարանների օգտագործողները, ովքեր ցանկանում են վերավաճառել պայմանագրով իրենց տրված թողունակությունները երկրորդային շուկայում, պետք է իրավասու լինեն այդ անելու:

Հոդված 18

Փոխադրման համակարգի օպերատորներին վերաբերող թափանցիկության պահանջները

1. Փոխադրման համակարգի օպերատորը պետք է հրապարակի այն մանրամասն տեղեկությունները, որոնք վերաբերում են իր առաջարկած ծառայություններին և կիրառված համապատասխան պայմաններին՝ տեխնիկական տեղեկությունների հետ միասին, որոնք անհրաժեշտ են ցանցի օգտագործողներին՝ ցանցի արդյունավետ մատչելիության հասնելու համար:
2. Թափանցիկ, անաչառ և խտրականությունը բացառող սակագներ ապահովելու և գազատար ցանցի արդյունավետ օգտագործմանը նպաստելու համար փոխադրման համակարգի օպերատորները կամ համապատասխան ազգային մարմինները պետք է հրապարակեն ողջամտորեն և բավարար չափով մանրամասնված տեղեկություններ սակագների ծագման, մեթոդաբանության և կառուցվածքի վերաբերյալ:
3. Մատուցվող ծառայությունների համար փոխադրման համակարգի յուրաքանչյուր օպերատոր, քանակական հիմքի հիման վրա, հրապարակում է տեխնիկական, պայմանագրով նախատեսված և հասանելի հնարավորությունների վերաբերյալ տեղեկությունները համապատասխան բոլոր կետերի համար՝ ներառյալ մուտքի և ելքի կետերը՝ կանոնավոր և տատանվող հիմքի հիման վրա և օգտագործողի համար շահավետ և ստանդարտացված ձևով:
4. Փոխադրման համակարգի համապատասխան կետերը, որոնց վերաբերյալ տեղեկությունները պետք է հրապարակվեն, պետք է հաստատվեն իրավասու մարմինների կողմից՝ ցանցի օգտագործողների հետ խորհրդակցելուց հետո:
5. Փոխադրման համակարգի օպերատորները պետք է միշտ բացահայտեն սույն Կանոնակարգով պահանջվող տեղեկությունները նպատակային, քանակականորեն պարզ և դյուրամատչելի ձևով և խտրականության բացառման հիման վրա:

6. Փոխադրման համակարգի օպերատորը պետք է հրապարակի առաջարկին և պահանջարկին նախորդող և հաջորդող տեղեկությունները՝ հիմնվելով հայտերի, կանխատեսումների և դեպի համակարգ հոսքերի և համակարգից արտահոսքերի վրա: Ազգային կարգավորման մարմինը պետք է ապահովի, որ այդ ամբողջ տեղեկությունները հրապարակվեն: Հրապարակային դարձված տեղեկությունների մանրամասնության մակարդակը պետք է արտացոլի փոխադրման համակարգի օպերատորների համար մատչելի տեղեկությունները:

7. Փոխադրման համակարգի օպերատորը պետք է իրականացնի հանրային միջոցների ձեռնարկումը, ինչպես նաև իրականացված ծախսերն ու համակարգի հավասարակշռությունն ապահովող եկամուտները:

8. Ներգրավված շուկայի մասնակիցները փոխադրման համակարգի օպերատորներին տրամադրում են սույն Հոդվածում նշված տվյալները:

Հոդված 19

Պահեստարաններին և ՀԲԳ կայաններին վերաբերող թափանցիկության պահանջները

1. ՀԲԳ և պահեստավորման համակարգի օպերատորները պետք է հրապարակեն այն մանրամասն տեղեկությունները, որոնք վերաբերում են իրենց առաջարկած ծառայություններին և կիրառված համապատասխան պայմաններին՝ տեխնիկական տեղեկությունների հետ միասին, որոնք անհրաժեշտ են ՀԲԳ կայանների և պահեստարանների օգտագործողներին՝ ՀԲԳ կայանների և պահեստարանների օգտագործման արդյունավետ մատչելիության հասնելու համար:

2. Մատուցվող ծառայությունների համար ՀԲԳ և պահեստավորման համակարգի օպերատորները պետք է հրապարակեն պայմանագրով նախատեսված, պահեստարանների ու ՀԲԳ կայանների թողունակությունների վերաբերյալ տեղեկությունները՝ քանակական հիման վրա՝ կանոնավոր և տատանվող հիմքի հիման վրա և օգտագործողի համար շահավետ և ստանդարտացված ձևով:

3. ՀԲԳ և պահեստավորման համակարգի օպերատորները պետք է միշտ բացահայտեն սույն Կանոնակարգով պահանջվող տեղեկությունները նպատակային, քանակականորեն պարզ և դյուրամատչելի ձևով և խտրականության բացառման հիման վրա:

4. ՀԲԳ և պահեստավորման համակարգի օպերատորները պետք է հրապարակեն յուրաքանչյուր պահեստարանում կամ ՀԲԳ կայանում կամ պահեստարանների մի խմբում եղած գազի քանակը, եթե այն համապատասխանում է համակարգի օգտագործողներին առաջարկվող մատչելիության ձևին, ներհոսքերին և արտահոսքերին և հասանելի պահեստարանների և ՀԲԳ կայանների թողունակություններին՝ ներառյալ երրորդ կողմի համար մատչելի թողունակությունը: Այդ տեղեկությունները պետք է հաղորդվեն նաև փոխադրման համակարգի այն օպերատորին, ով այն հանրամատչելի կդարձնի՝ համապատասխան կետերով նախատեսված յուրաքանչյուր համակարգի կամ ենթահամակարգի ամփոփ մակարդակով: Տեղեկությունները պետք է թարմացվեն առնվազն ամեն օր:

5. Այն դեպքերում, երբ պահեստավորման համակարգի օգտագործողը միայն պահեստավորման կայանի օգտագործող է, պահեստավորման համակարգի օգտագործողը կարող է ազգային կարգավորման մարմնին ներկայացնել հիմնավորված խնդրանք՝ սույն ենթապարբերության մեջ նշված տվյալների գաղտնի մշակման համար: Եթե ազգային կարգավորման մարմինը գալիս է այն եզրակացության, որ այդ խնդրանքը հիմնավորված է՝ հաշվի առնելով, մասնավորապես, առևտրային գաղտնիքների օրինական պաշտպանության շահերը հավասարակշռության մեջ պահելու կարիքը, որոնց բացահայտումը բացասաբար կազդի պահեստարանի օգտագործողի առևտրային ամբողջ ռազմավարության վրա՝ նպատակ ունենալով ստեղծելու գազի մրցակցային ներքին շուկա, ապա այն կարող է պահեստավորման համակարգի օպերատորին թույլ չտալ հրապարակել առաջին ենթապարբերության մեջ նշված տվյալները՝ մինչև մեկ տարի ժամանակահատվածով:

6. Երկրորդ ենթապարբերությունը կիրառվում է՝ չհակասելով առաջին ենթապարբերության մեջ նշված փոխադրման համակարգի օպերատորին հաղորդելու և նրա կողմից հանրամատչելի դարձնելու պարտավորություններին, մինչև ամփոփ տվյալները նույնականացվեն անհատական պահեստավորման համակարգի տվյալների հետ, որոնց համար ազգային կարգավորման մարմինները հաստատել են, որ դրանք հրապարակային չդարձվեն:

7. Թափանցիկ, անաչառ և խտրականությունը բացառող սակագներ ապահովելու և ենթակառուցվածքների արդյունավետ օգտագործումը խթանելու համար ՀԲԳ կայանների և պահեստարանների օպերատորները կամ համապատասխան կարգավորող մարմինները հանրամատչելի են դարձնում սակագների ծագման, մեթոդաբանությունների և

կարգավորված երրորդ կողմի համար մատչելի ենթակառուցվածքի սակագների կառուցվածքի վերաբերյալ բավարար չափով մանրամասն տեղեկությունները:

Հոդված 20

Համակարգի օպերատորների կողմից տվյալների վարումը

Փոխադրման համակարգի օպերատորները, պահեստավորման համակարգի օպերատորներն ու ՀԲԳ համակարգի օպերատորները պետք է ազգային մարմինների՝ ներառյալ ազգային կարգավորման մարմինների, ազգային մրցակցային մարմինների ու Հանձնաժողովի տրամադրության տակ պահեն 18-րդ և 19-րդ հոդվածներով, ինչպես նաև I հավելվածի 3-րդ մասով նախատեսված անհրաժեշտ ողջ տեղեկությունները հինգ տարի ժամկետով:

Հոդված 21

Ծառայությունների մատուցումն ապահովող կանոնները և ծառայությունները չմատուցելու դեպքում գանձվող վճարները

1. Ծառայությունների մատուցումն ապահովող կանոնները պետք է որոշվեն արդար, խտրականությունը բացառող և թափանցիկ ձևով և պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա: Ծառայությունների մատուցումն ապահովող կանոնները պետք է անդրադարձնեն համակարգի իրական կարիքները՝ հաշվի առնելով փոխադրման համակարգի օպերատորի համար մատչելի աղբյուրները: Ծառայությունների մատուցումն ապահովող կանոնները պետք է լինեն շուկայական:
2. Ցանցի օգտագործողներին ժամանակավոր շտկման գործողություններ ձեռնարկելու հնարավորություն ընձեռելու համար փոխադրման համակարգի օպերատորը պետք է ցանցի օգտագործողների կարգավիճակը բալանսի բերելու վերաբերյալ բավարար, լավ հաշվարկված և հավաստի առցանց տեղեկություններ տրամադրի:
3. Տրամադրված տեղեկությունները պետք է անդրադարձնեն փոխադրման համակարգի օպերատորին հասանելի տեղեկությունների մակարդակը և այն ժամանակահատվածի սահմանումը, որի ընթացքում հաշվարկվում են ծառայությունները չմատուցելու դեպքում գանձվող վճարները:

4. Տեղեկությունների տրամադրման համար վճարներ չեն գանձվում՝ համաձայն սույն պարբերության:

5. Ծառայությունները չմատուցելու դեպքում գանձվող վճարները պետք է հնարավորինս արտահայտեն ծախսերը՝ միաժամանակ տրամադրելով պատշաճ խրախուսական միջոցներ ցանցի օգտագործողներին՝ գազի իրենց ներածման և արտածման ծավալները հավասարակշռության մեջ պահելու համար: Նրանք պետք է խուսափեն ցանցի օգտագործողների միջև խաչաձև սուբսիդավորումից և չպետք է խոչընդոտեն շուկա նոր մուտք գործողների մուտքը:

6. Ծառայությունները չմատուցելու դեպքում գանձվող վճարների, ինչպես նաև վերջնական սակագների հաշվարկման ցանկացած մեթոդաբանություն պետք է պատշաճ ձևով հանրամատչելի դարձվի իրավասու մարմինների կամ փոխադրման համակարգի օպերատորի կողմից:

7. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ փոխադրման համակարգի օպերատորներն աշխատեն ներդաշնակեցնել ծառայությունների մատուցման ռեժիմները և կատարելագործման համակարգերն ու ծառայությունների մատուցման համար գանձվող վճարների մակարդակները՝ գազի առևտուրը դյուրացնելու նպատակով:

Հոդված 22

Ծավալները շահագործելու իրավունքների վաճառքը

Փոխադրման, պահեստավորման և ՀԲԳ համակարգի յուրաքանչյուր օպերատոր պետք է ողջամիտ քայլեր ձեռնարկի՝ թույլ տալու համար ծավալները շահագործելու իրավունքների ազատ վաճառքը և դյուրացնելու համար թափանցիկ և խտրականությունը բացառող այդ վաճառքը: Յուրաքանչյուր նման օպերատոր պետք է մշակի փոխադրման, ՀԲԳ կայանի և պահեստավորման վերաբերյալ ներդաշնակեցված պայմանագրեր և առաջնային շուկայի վերաբերյալ ընթացակարգեր՝ դյուրացնելու համար որոշակի ծավալի երկրորդային վաճառքը, և պետք է ճանաչի կարողությունները շահագործելու նախնական իրավունքների փոխանցումը՝ համակարգի օգտագործողների կողմից տեղեկացված լինելու դեպքում:

Կարգավորող մարմինները պետք է տեղեկանան փոխադրման, ՀԲԳ կայանի և պահեստավորման վերաբերյալ ներդաշնակեցված պայմանագրերի ու ընթացակարգերի մասին:

Հոդված 23

Ուղեցույցներ

1. Անհրաժեշտության դեպքում սույն Կանոնակարգի նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ ներդաշնակեցման նվազագույն աստիճանը տրամադրող Ուղեցույցները սահմանում են՝

ա) երրորդ կողմի համար մատչելի ծառայությունների վերաբերյալ մանրամասները՝ ներառյալ այդ ծառայությունների բնույթը, տևողությունն ու այլ պահանջներ՝ համաձայն 14-րդ և 15-րդ հոդվածների,

բ) ծավալների բաշխման մեխանիզմներն ընդգծող սկզբունքների և, պայմանագրային գերբեռնվածության դեպքում, գերբեռնվածության կառավարման ընթացակարգերի կիրառման վերաբերյալ մանրամասները՝ համաձայն 16-րդ և 17-րդ հոդվածների,

գ) տեղեկությունների տրամադրման, համակարգի արդյունավետ մատչելիության հասնելու համար ցանցի օգտագործողների համար անհրաժեշտ տեխնիկական տեղեկությունների սահմանման և թափանցիկության պահանջների բոլոր համապատասխան կետերի սահմանման մանրամասները՝ ներառյալ համապատասխան բոլոր կետերում հրապարակվելիք տեղեկություններն ու այդ տեղեկությունների հրապարակման ժամանակացույցը՝ համաձայն 18-րդ և 19-րդ հոդվածների,

դ) բնական գազի միջսահմանային առևտրի սակագնային մեթոդաբանության վերաբերյալ մանրամասներ՝ համաձայն 13-րդ հոդվածի,

ե) 8(6) հոդվածում թվարկված ոլորտներին առնչվող մանրամասներ:

2. Այդ նպատակով Հանձնաժողովը խորհրդակցում է Գործակալության և Գազի ՓԸՕԵՑ-ի հետ:

3. 1-ին պարբերության (ա), (բ) և (գ) կետերում թվարկված խնդիրների վերաբերյալ ուղեցույցները ներկայացված են I հավելվածում՝ փոխադրման համակարգի օպերատորների առնչությամբ:

4. Հանձնաժողովը կարող է ուղեցույցներ ընդունել սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ թվարկված խնդիրների վերաբերյալ և փոփոխել այդ հոդվածի (ա), (բ) և (գ) կետերում նշված ուղեցույցները: Մասնավորապես լրացումների միջոցով սույն Կանոնակարգի ոչ էական

տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 28(2) հոդվածում նշված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

5. Սույն Կանոնակարգի համաձայն ընդունված ուղեցույցների կիրառումն ու փոփոխումը պետք է անդրադարձնի ազգային գազատար համակարգերի միջև տարբերությունները և, այդ իսկ պատճառով, չպետք է Համայնքի մակարդակով երրորդ կողմի համար մատչելիության մանրամասն միասնական ժամկետներ և պայմաններ պահանջի: Նրանք պետք է, այնուամենայնիվ, սահմանեն այն նվազագույն պահանջները, որոնք պետք է բավարարվեն՝ բնական գազի ներքին շուկայի համար անհրաժեշտ ցանցի մատչելիության՝ խտրականությունը բացառող և թափանցիկ պայմաններին հասնելու համար, որոնք կարող են հետագայում կիրառվել՝ հաշվի առնելով ազգային գազատար համակարգերի միջև տարբերությունները:

Հոդված 24

Կարգավորող մարմինները

Սույն Կանոնակարգի ներքո իրենց պարտավորություններն իրականացնելիս կարգավորող մարմինները պետք է ապահովեն սույն Կանոնակարգի և 23-րդ հոդվածի համաձայն ընդունված Ուղեցույցների հետ համապատասխանությունը:

Անհրաժեշտության դեպքում նրանք համագործակցում են միմյանց հետ, Հանձնաժողովի և Գործակալության հետ՝ 2009/73/ԵՀ հրահանգի VIII գլխին համապատասխան:

Հոդված 25

Տեղեկությունների տրամադրումը

Անդամ պետությունները և կարգավորող մարմինները պետք է, պահանջի դեպքում, Հանձնաժողովին տրամադրեն 23-րդ հոդվածի նպատակներով անհրաժեշտ ողջ տեղեկությունները:

Հանձնաժողովը պետք է սահմանի ողջամիտ ժամկետներ, որի ընթացքում տեղեկությունները հնարավոր կլինի տրամադրել՝ հաշվի առնելով պահանջվող

տեղեկությունների բարդությունն ու այդ տեղեկությունների անհրաժեշտության հրատապությունը:

Հոդված 26

Անդամ պետությունների՝ ավելի մանրամասն միջոցներ տրամադրելու իրավունքը

Սույն Կանոնակարգը չպետք է հակասի անդամ պետությունների՝ այնպիսի միջոցներ պահպանելու և ներկայացնելու իրավունքին, որոնք պարունակում են ավելի մանրամասն դրույթներ, քան ներկայացված են այստեղ կամ 23-րդ հոդվածում նշված Ուղեցույցներում:

Հոդված 27

Տոյժերը

1. Անդամ պետությունը սահմանում են սույն Կանոնակարգի խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների կանոնները և ձեռնարկում են այդ դրույթները կիրառելու համար անհրաժեշտ բոլոր քայլերն: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ: Անդամ պետությունները, մինչև 2006 թվականի հուլիսի 1-ը, Հանձնաժողովին տեղեկացնում են թիվ 1775/2005 (ԵՀ) կանոնակարգի դրույթներին համապատասխանող կանոնների մասին և առանց հապաղման տեղեկացնում են հետագայում դրանցում կատարված ցանկացած փոփոխության մասին: ► C2 Նրանք, մինչև 2011 թվականի մարտի 3-ը, Հանձնաժողովին տեղեկացնում են թիվ 1775/2005 (ԵՀ) կանոնակարգի դրույթներին չհամապատասխանող կանոնների մասին և առանց հապաղման տեղեկացնում են հետագայում դրանցում կատարված ցանկացած փոփոխության մասին:
2. 1-ին պարբերության համաձայն նախատեսված պատժամիջոցները չեն կարող ունենալ քրեական իրավունքի բնույթ:

Հոդված 28

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է 2009/73/ԵՀ հրահանգի 51-րդ հոդվածով ստեղծված Կոմիտեն:
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-ից մինչև (4)-րդ և 7-րդ հոդվածները կիրառվում են՝ հաշվի առնելով որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 29

Հանձնաժողովի զեկույցը

Հանձնաժողովը դիտանցում է սույն Կանոնակարգի իրականացումը: 2009/73/ԵՀ հրահանգի 52(6) հոդվածում նշված իր հաշվետվության մեջ Հանձնաժողովը պետք է հայտնի սույն Կանոնակարգի կիրառման ժամանակ ձեռք բերած իր փորձի մասին: Մասնավորապես, հաշվետվությունը պետք է ուսումնասիրի, թե ինչ չափով է սույն Կանոնակարգը հաջողության հասել գազի փոխադրման ցանցերի համար խտրականությունը բացառող և ծախսերն արտահայտող ցանցի մատչելիության պայմաններ ապահովելու գործում՝ նպաստելու համար լավ գործող ներքին շուկայում բաժանորդի ընտրությանը և մատակարարման երկարաժամկետ անվտանգությանը: Հարկ եղած դեպքում, զեկույցին կցվում են համապատասխան առաջարկներ և (կամ) առաջարկություններ:

Հոդված 30

Շեղումները և բացառությունները

Սույն Կանոնակարգը չի կիրառվում հետևյալի նկատմամբ՝

ա) անդամ պետությունների տարածքներում տեղակայված բնական գազի փոխադրման համակարգեր՝ 2009/73/ԵՀ հրահանգի 49-րդ հոդվածի համաձայն շնորհված շեղման ժամկետներով,

բ) նոր հիմնական ենթակառուցվածք, ինչպես օրինակ՝ փոխմիացումներ, ՀԲԳ կայաններ և պահեստարաններ և գոյություն ունեցող ենթակառուցվածքներում թողունակության բարձրացումներ, ինչպես նաև այդ ենթակառուցվածքի փոփոխություններ, որոնք գազի մատակարարման նոր աղբյուրների զարգացման հնարավորություն են ընձեռում՝ ինչպես նշված է 2009/73/ԵՀ հրահանգի 36(1) և (2) հոդվածում, որոնք այդ հրահանգի 9-րդ, 14-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ հոդվածների կամ 41(6), (8) և (10) հոդվածի դրույթներից բացառություն են այնքան ժամանակ, քանի դեռ դրանք բացառություն են համարվում սույն ենթապարբերության մեջ նշված դրույթներից՝ բացառությամբ սույն Կանոնակարգի 19(4) հոդվածը կամ

գ) բնական գազի փոխադրման համակարգեր, որոնք համարվում են շեղումներ՝ համաձայն 2009/73/ԵՀ հրահանգի 48-րդ հոդվածի:

Ինչ վերաբերում է առաջին ենթապարբերության (ա) կետին, անդամ պետությունները, որոնց 2009/73/ԵՀ հրահանգի 49-րդ հոդվածի համաձայն վերապահում է շնորհվել, կարող են դիմել Հանձնաժողովին սույն Կանոնակարգից ժամանակավոր շեղում կատարելու համար՝ մինչև երկու տարի ժամկետով՝ սկսած այն օրվանից, երբ այդ կետում նշված շեղումը վերանա:

Հոդված 31

Ուժը կորցրած ճանաչելը

2011 թվականի մարտի 3-ից թիվ 1775/2005 (ԵՀ) կանոնակարգը ճանաչվում է ուժը կորցրած: Ուժը կորցրած կանոնակարգին արված հղումները պետք է դիտվեն որպես սույն Կանոնակարգին արված հղումներ և պետք է կարդացվեն հավելված II-ում սահմանված հարաբերակցության աղյուսակի համաձայն:

Հոդված 32

Ուժի մեջ մտնելը

▼C1

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Այն կիրառվում է 2011 թվականի մարտի 3-ից:

▼B

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

1. Երրորդ կողմի համար մատչելի ծառայությունները, որոնք վերաբերում են փոխադրման համակարգի օպերատորներին
1. Փոխադրման համակարգի օպերատորները պետք է մշտական և ընդմիջումներով ծառայություններ առաջարկեն նվազագույնը մեկօրյա ժամկետով:
2. Փոխադրման ներդաշնակեցված պայմանագրերը և ընդհանուր ցանցի ծածկագրերը պետք է որոշվեն այնպիսի տարբերակով, որը կոյուրացնի պայմանագրով նախատեսված թողունակության վաճառքն ու վերաօգտագործումը ցանցի օգտագործողների կողմից՝ չխոչընդոտելով թողունակության ազատումը:
3. Փոխադրման համակարգի օպերատորները, ցանցի օգտագործողների հետ պատշաճ խորհրդակցությունից հետո, պետք է զարգացնեն ցանցի ծածկագրեր և ներդաշնակեցված պայմանագրեր:
4. Փոխադրման համակարգի օպերատորները պետք է իրականացնեն հայտի և ճշգրտված հայտի ստանդարտացված ընթացակարգեր: Նրանք պետք է զարգացնեն տեղեկատվական համակարգեր և էլեկտրոնային հաղորդակցության միջոցներ՝ ցանցի օգտագործողներին պատշաճ տեղեկություններ տրամադրելու և գործարքները պարզեցնելու համար, ինչպիսիք են հայտերը, թողունակության պայմանագրով նախատեսումը և ցանցի օգտագործողների միջև թողունակությունն օգտագործելու իրավունքների փոխանցումը:
5. Փոխադրման համակարգի օպերատորները պետք է ներդաշնակեցնեն պահանջի պաշտոնական ընթացակարգերն ու պատասխանների ժամկետները՝ համաձայն արդյունաբերական լավագույն գործելակերպի՝ նպատակ ունենալով նվազագույնին հասցնելու պատասխանների համար նախատեսված ժամանակահատվածը: Նրանք

պետք է թողունակությունն առցանց էլեկտրոնային ձևով նախապես պատվիրելու և հաստատելու համակարգեր, ինչպես նաև հայտերի և ճշգրտված հայտերի ընթացակարգեր ապահովեն, ոչ ուշ, քան 2006 թվականի հուլիսի 1-ը՝ ցանցի համապատասխան օգտագործողների հետ խորհրդակցելուց հետո:

6. Փոխադրման համակարգի օպերատորները չպետք է առանձին-առանձին վճարներ գանձեն ցանցի օգտագործողներից տեղեկություններ պահանջելու և նրանց փոխադրումների պայմանագրերի հետ կապված գործարքների համար, որոնք իրականացվում են ստանդարտ կանոնների և ընթացակարգերի համաձայն:
7. Տեղեկություններ ստանալու հարցումների համար, որոնք լրացուցիչ և չափազանց մեծ ծախսեր են պահանջում, ինչպես իրագործելիության ուսումնասիրությունները, կարող են առանձին-առանձին վճարներ գանձվել՝ պայմանով, որ վճարները լինեն պատշաճ կերպով հիմնավորված:
8. Փոխադրման համակարգի օպերատորները պետք է համագործակցեն փոխադրման համակարգի այլ օպերատորների հետ իրենց համապատասխան ցանցերի պահպանության գործողությունները համակարգելու հարցում, որպեսզի նվազագույնին հասցվի ցանցի օգտագործողներին կամ այլ ոլորտների փոխադրման համակարգի օպերատորներին մատուցվող փոխադրման ծառայությունների որևէ ծախսողումը և որպեսզի հնարավոր լինի ապահովել հավասար շահույթ՝ կապված գազի անխափան մատակարարման հետ՝ մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է փոխանցումներին:
9. Փոխադրման համակարգի օպերատորները պետք է առնվազն յուրաքանչյուր տարի, նախապես որոշված վերջնաժամկետով, հրապարակեն տեխնիկական սպասարկման համար պլանավորված բոլոր ժամկետները, որոնք կարող էին ազդել ցանցի օգտագործողների՝ փոխադրման վերաբերյալ պայմանագրերով նախատեսված իրավունքների և համապատասխան գործառնական տեղեկատվության վրա՝ համապատասխան նախօրոք ծանուցմամբ: Սա ներառում է տեխնիկական սպասարկման համար պլանավորված բոլոր ժամկետների փոփոխությունների արագ և

խտրականությունը բացառող ձևով հրապարակումը և չնախատեսված տեխնիկական սպասարկման մասին ծանուցումը հենց որ այդ տեղեկությունները փոխադրման համակարգի օպերատորի համար դառնան մատչելի: Տեխնիկական սպասարկման ընթացքում փոխադրման համակարգի օպերատորները պետք է հրապարակեն այդ սպասարկման մանրամասների, ակնկալվող տևողության և ազդեցությունների վերաբերյալ կանոնավոր թարմացվող տեղեկությունները:

10. Փոխադրման համակարգի օպերատորները պետք է պահպանեն և իրավասու մարմիններին համար, պահանջի առկայության դեպքում, հասանելի դարձնեն իրական սպասարկման և հոսքի խանգարումների դիտարկումների օրական մատյանները: Պահանջի դեպքում տեղեկությունները մատչելի են դարձվում նաև այդ խանգարումների հետևանքով ազդեցություն կրածներին:

2. Փոխադրման համակարգի օպերատորներին իրավասություններ սահմաններում գտնվող թողունակության բաշխման մեխանիզմների և գերբեռնվածության կառավարման ընթացակարգերի սկզբունքները և դրանց կիրառումը պայմանագրային գերբեռնվածության դեպքում

2.1. Փոխադրման համակարգի օպերատորներին իրավասություններ սահմաններում գտնվող թողունակության բաշխման մեխանիզմների և գերբեռնվածության կառավարման ընթացակարգերի սկզբունքները

1. Թողունակության բաշխման մեխանիզմները և գերբեռնվածության կառավարման ընթացակարգերը պետք է դյուրացնեն մրցակցության զարգացումն ու որոշակի ծավալով հեղուկների վաճառքը և պետք է համապատասխանեն շուկայական մեխանիզմներին՝ ներառյալ սփոթ շուկաներն ու առևտրի կենտրոնները: Դրանք պետք է լինեն ճկուն և ընդունակ շուկայի զարգացող հանգամանքներին հարմարվելուն:

2. Այդ մեխանիզմներն ու ընթացակարգերը պետք է հաշվի առնեն տվյալ համակարգի ամբողջականությունը, ինչպես նաև գազի անխափան մատակարարումը:

3. Այդ մեխանիզմներն ու ընթացակարգերը ոչ պետք է խոչընդոտեն շուկա նոր մուտք

գործողների մուտքը, ոչ էլ պետք է շուկա մուտք գործելու համար անհարկի խոչընդոտներ ստեղծեն: Նրանք չպետք է կանխեն շուկայի մասնակիցների՝ ներառյալ շուկա նոր մուտք գործողների և շուկայում փոքր մասնաբաժին ունեցող ընկերությունների արդյունավետ մրցակցությունը:

4. Այդ մեխանիզմներն ու ընթացակարգերը պետք է համապատասխան տնտեսական ազդանշաններ տրամադրեն թողունակության արդյունավետ և առավելագույնս օգտագործման համար և նպաստեն նոր ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելուն:

5. Ցանցի օգտագործողներին պետք է խորհուրդներ տալ այն հանգամանքների վերաբերյալ, որոնք կարող են ազդեցություն ունենալ պայմանագրով նախատեսված թողունակության մատչելիության վրա: Ընդհատման վերաբերյալ տեղեկությունները պետք է անդրադարձնեն փոխադրման համակարգի օպերատորին հասանելի տեղեկությունների մակարդակը:

6. Եթե համակարգի ամբողջականության պատճառով պայմանագրով նախատեսված առաքման պարտավորությունները կատարելու հարցում բարդություններ առաջանան, փոխադրման համակարգի օպերատորները պետք է ցանցի օգտագործողներին տեղեկացնեն այդ մասին և անհապաղ խտրականությունը բացառող լուծում փնտրեն:

Փոխադրման համակարգի օպերատորները պետք է խորհրդակցեն ցանցի օգտագործողների հետ՝ կապված մինչև իրականացումը նախատեսված ընթացակարգերի հետ և դրանք համաձայնեցնեն կարգավորող մարմինների հետ:

2.2. Պայմանագրային գերբեռնվածության դեպքում գերբեռնվածության կառավարման ընթացակարգերը

1. Եթե պայմանագրով նախատեսված թողունակությունը չի օգտագործվում, փոխադրման համակարգի օպերատորները պետք է այդ թողունակությունը հասանելի դարձնեն առաջնային շուկայում ընդհատելի հիմունքով՝ տարբեր տևողությունների վերաբերյալ պայմանագրերի միջոցով այնքան ժամանակ, քանի դեռ թողունակությունը ցանցի

համապատասխան օգտագործողի կողմից ողջամիտ գնով չի առաջարկվել երկրորդական շուկայում:

2. Ընդհատվող թողունակությունից ստացվող եկամուտները պետք է բաշխվեն՝ համաձայն համապատասխան կարգավորող մարմնի կողմից սահմանված կամ հաստատված կանոնների: Այդ կանոնները պետք է համապատասխանեն համակարգի էֆեկտիվ և արդյունավետ աշխատանքի վերաբերյալ պահանջներին:
3. Ընդհատվող թողունակությունի ողջամիտ գինը կարող է որոշվել համապատասխան կարգավորող մարմինների կողմից՝ հաշվի առնելով առկա հատուկ հանգամանքները:
4. Անհրաժեշտության դեպքում փոխադրման համակարգի օպերատորները պետք է հիմնավորված գործողություններ ձեռնարկեն՝ շուկայում չօգտագործված թողունակության առնվազն որոշակի մասերը որպես հաստատուն թողունակություն առաջարկելու համար:

▼M1

3. Համակարգի արդյունավետ մատչելիության հասնելու համար ցանցի օգտագործողների համար անհրաժեշտ տեխնիկական տեղեկությունների սահմանումը, թափանցիկության պահանջների բոլոր համապատասխան կետերի սահմանումը, համապատասխան բոլոր կետերում հրապարակվելիք տեղեկություններն ու այդ տեղեկությունների հրապարակման ժամանակացույցը

3.1. Համակարգի արդյունավետ մատչելիության հասնելու համար ցանցի օգտագործողների համար անհրաժեշտ տեխնիկական տեղեկությունների սահմանումը

3.1.1. Հրապարակման ձևը

1) Փոխադրման համակարգի օպերատորները (ՓՀՕները) պետք է 3.1.2 և 3.3(1)–ից 3.3(5) պարբերություններում նշված ամբողջ տեղեկությունները տրամադրեն հետևյալ ձևով՝

ա) հանրությանը մատչելի կայքերով՝ անվճար և առանց գրանցվելու կամ որևէ այլ կերպ փոխադրման համակարգի օպերատորի հետ համակարգի մեջ մտնելու անհրաժեշտության,

բ) պարբերաբար/տատանվող հիմունքով. հաճախականությունը կախված է այն փոփոխություններից, որոնք կատարվում են ծառայության ընթացքում,

գ) օգտագործողի համար արդյունավետ տարբերակով,

դ) հստակ, քանակական, դյուրամատչելի ձևով և խտրականության բացառման հիման վրա,

ե) ներբեռնելի ձևաչափով, որը քանակական վերլուծության հնարավորություն է ընձեռում,

զ) համապատասխան միավորով՝ մասնավորապես կՎտ/ժ (298,15 Կ այրման սկզբնական ջերմաստիճանով), որը կլինի էներգիայի միավորը և մ³ (273,15 Կ և 1,01325 բար), որը կլինի ծավալի միավորը: Էներգիայի համար պետք է տրամադրվի փոխակերպման կայուն գործակից: Վերև նշված ձևաչափից բացի, այլ տարբերակով հրապարակումը նույնպես հնարավոր է,

է) անդամ պետության պաշտոնական լեզվով (լեզուներով) և անգլերենով:

2) Փոխադրման համակարգի օպերատորները պետք է 3.1.2 և 3.3(1)–ից 3.3(5) պարբերություններում նշված ամբողջ տեղեկությունների հետ կատարված փոփոխությունների մանրամասները տրամադրեն ողջամիտ ժամկետներում՝ անմիջապես իրենց հասանելի լինելու դեպքում:

3.1.2. Հրապարակման բովանդակությունը

Փոխադրման համակարգի օպերատորները պետք է հրապարակեն իրենց համակարգերի և մատուցած ծառայությունների վերաբերյալ առնվազն հետևյալ տեղեկությունները՝

ա) առաջարկվող տարբեր ծառայությունների մանրամասն և համապարփակ նկարագրությունը և դրանց համար նախատեսված վճարները.

բ) այս ծառայությունների համար մատչելի փոխադրման պայմանագրերի տարբեր տեսակները.

գ) ցանցի ծածկագիրը և (կամ) ստանդարտ պայմանները, որոնք նկարագրում են ցանցի բոլոր օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները՝ ներառյալ

1. փոխադրման ներդաշնակեցված պայմանագրերն ու այլ համապատասխան փաստաթղթերը.

2. եթե անհրաժեշտ է համակարգի մատչելիության կամ սույն հավելվածի 3.2 պարբերության մեջ նկարագրված համապատասխան բոլոր կետերի համար,

համապատասխան գազի որակի պարամետրերի նկարագրությունը՝ ներառյալ առնվազն համախառն ջերմարարությունն ու Ուոբբի ցուցիչը և, այս նկարագրություններից դուրս լինելու դեպքում, ցանցի օգտագործողների փոփոխման պատասխանատվությունը կամ ծախսերը.

3. եթե անհրաժեշտ է համակարգի մատչելիության կամ համապատասխան բոլոր կետերի համար, տեղեկությունների ճնշման համար ներկայացվող պահանջների վերաբերյալ.

4. ընթացակարգ այն դեպքում, երբ ընդհատվող թողունակությունն ընդհատվի՝ անհրաժեշտության դեպքում ներառյալ առանձին ընդհատումների ժամկետները, քանակը և դասակարգումը (օրինակ՝ համամասնական կամ first-come-last-interrupted).

դ) ներդաշնակեցված ընթացակարգերը, որոնք կիրառվում են փոխադրման համակարգերն օգտագործելիս՝ ներառյալ հիմնական եզրույթների սահմանումները.

ե) թողունակության բաշխման, գերբեռնվածության կառավարման վերաբերյալ դրույթներ և կուտակման դեմ ուղղված և վերաօգտագործմանն ուղղված ընթացակարգեր.

զ) երկրորդային շուկայում թողունակության առևտրի դեպքում կիրառվող կանոններ՝ կապված փոխադրման համակարգի օպերատորի հետ.

է) հավասարակշռության վերաբերյալ կանոններ և հավասարակշռության խախտման դեպքում գանձվող վճարների հաշվարկման մեթոդաբանություն.

ը) անհրաժեշտության դեպքում ճկունության և հանդուրժողականության մակարդակները՝ ներառված փոխադրման և այլ ծառայությունների մեջ՝ առանց առանձին վճարների, ինչպես նաև բացի այդ առաջարկված ցանկացած ճկունություն և համապատասխան վճարներ.

թ) մանրամասն նկարագրություն փոխադրման համակարգի օպերատորի գազի համակարգի և դրա միացման համապատասխան կետերի վերաբերյալ, որոնք նշված են սույն հավելվածի 3.2 պարբերության մեջ, ինչպես նաև միմյանց միացված համակարգերի կամ կայանների օպերատորների անունները.

ժ) փոխադրման համակարգի օպերատորի կողմից շահագործվող համակարգին միանալու համար կիրառվող կանոններ.

ժա) տեղեկություններ արտակարգ իրավիճակների ժամանակ գործող մեխանիզմների վերաբերյալ՝ այնքանով, որքանով դա կարող է հանգեցնել բաժանորդների խմբերի

անջատմանը և պատասխանատվության մասին ընդհանուր այլ նորմեր, որոնք կիրառվում են փոխադրման համակարգի օպերատորի նկատմամբ.

ժբ) փոխադրման համակարգի օգտագործողների կողմից գազատար համակարգերի միացման կետերում իրականացնելու համար նախատեսված ընթացակարգեր, որոնք պետք է ապահովեն ցանցի օգտագործողների մատչելիությունը փոխադրման համակարգերին, որոնք վերաբերում են ցանցի փոխգործակցելիությանը, հայտի և համապատասխանության ընթացակարգերի վերաբերյալ համաձայնեցված ընթացակարգերին, որոնք սահմանում են գազի հոսքի բաշխման և կարգավորման վերաբերյալ դրույթները՝ ներառյալ կիրառվող մեթոդները.

ժգ) փոխադրման համակարգի օպերատորները պետք է հրապարակեն մեթոդաբանության և ընթացքի վերաբերյալ մանրամասն և համապարփակ նկարագրությունը՝ ներառյալ գործի դրվող պարամետրերի վերաբերյալ տեղեկությունները և տեխնիկական թողունակությունը հաշվարկելու համար կիրառվող հիմնական ենթադրությունները:

3.2. Թափանցիկության պահանջների համապատասխան բոլոր կետերի սահմանումը

1) Համապատասխան կետերը պետք է առնվազն ներառեն՝

ա) փոխադրման համակարգի օպերատորի կողմից շահագործվող փոխադրման ցանցի մուտքի և ելքի բոլոր կետերը՝ բացառությամբ միակ վերջնական բաժանորդին միացված ելքային կետերի և ԵՄ տարածքում տեղակայված միակ արտադրողի արտադրական կայանին անմիջականորեն միացված ելքային կետերը.

բ) փոխադրման համակարգի օպերատորների՝ ծառայությունների մատուցման գոտիներն իրար միացնող մուտքի և ելքի կետերը.

գ) բոլոր այն կետերը, որոնք փոխադրման համակարգի օպերատորի կողմից շահագործվող ցանցը միացնում են ՀԲԳ տերմինալին, բնական գազի բաշխիչ կայաններին, պահեստավորման և արտադրական կայաններին՝ մինչև արտադրական այս կայաններն ազատվեն՝ համաձայն ա) կետի.

դ) բոլոր այն կետերը, որոնք տվյալ փոխադրման համակարգի օպերատորի ցանցը միացնում են այն ենթակառուցվածքին, որն անհրաժեշտ է 2009/73/ԵՀ հրահանգի 2(14) հոդվածում նշված օժանդակ ծառայություններն ապահովելու համար:

2) Տեղեկությունները միակ վերջնական բաժանորդի և արտադրական այն կայանների մասին, որոնք հանվել են 3.2(1)(ա) հոդվածում նկարագրված համապատասխան կետերի սահմանումից, պետք է հրապարակվեն ամբողջական ձևով՝ առնվազն ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գոտու համար առանձին: Վերջնական անհատ բաժանորդների և արտադրական այն կայանների համախմբումը, որոնք հանվել են 3.2(1)(ա) հոդվածում նկարագրված համապատասխան կետերի սահմանումից, պետք է համարվեն որպես մեկ համապատասխան կետ՝ սույն հավելվածի կիրառման նպատակով:

3) Եթե փոխադրման երկու կամ ավելի օպերատորների միջև գտնվող կետերի աշխատանքը կարգավորվում է միայն տվյալ փոխադրման օպերատորների կողմից՝ առանց համակարգի օգտագործողների պայմանագրային կամ գործառնական ներգրավվածության, կամ եթե կետերը միացնում են փոխադրման համակարգը բաշխման համակարգին և այդ կետերում չկա պայմանագրային գերբեռնվածություն, ապա փոխադրման համակարգի օպերատորները պետք է այդ կետերին ազատեն սույն հավելվածի 3.3 պարբերությամբ նախատեսված պահանջները հրապարակելու պարտավորությունից: Ազգային կարգավորման մարմինը կարող է փոխադրման համակարգի օպերատորներից պահանջել հրապարակել սույն հավելվածի 3.3 պարբերությամբ նախատեսված պահանջներն ազատված մի շարք կետերի կամ բոլոր կետերի համար: Նման դեպքում տեղեկությունները, եթե մատչելի են $\Phi < 0$ համար, պետք է հրապարակվեն ամբողջական ձևով, ողջամիտ մակարդակում՝ առնվազն ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գոտու համար առանձին: Այս կետերի համախմբումը պետք է, սույն հավելվածի կիրարկման նպատակով, համարվի որպես մեկ համապատասխան կետ:

3.3. Համապատասխան բոլոր կետերում հրապարակվելիք տեղեկություններն ու այդ տեղեկությունների հրապարակման ժամանակացույցը

1) Համապատասխան բոլոր կետերում փոխադրման համակարգի օպերատորները պետք է հրապարակեն (ա)–ից (ե) պարբերություններում թվարկված տեղեկությունները՝ նախատեսված բոլոր ծառայությունների և օժանդակ ծառայությունների համար (մասնավորապես՝ տեսակախառնման, բալաստման և փոխակերպման մասին տեղեկությունները): Այս տեղեկությունները պետք է հրապարակվեն քանակական հիմքի հիման վրա՝ ամեն ժամ կամ ամեն օր՝ թողունակությունը պատվիրելու և դրա համար (ճշգրտված) հայտ ներկայացնելու ամենափոքր բազային ժամանակահատվածին և ծառայությունները չմատուցելու դեպքում գանձվող վճարների հաշվարկման համար նախատեսված ամենափոքր ժամանակահատվածին համարժեք: Եթե բազային

ամենակարճ ժամանակահատվածը այլ է, քան մեկօրյա ժամանակահատվածը, (ա)–ից (է) պարբերություններում թվարկված տեղեկությունները պետք է հասանելի դարձվեն նաև ամեն օր: Այս տեղեկությունները և թարմացումները պետք է հրապարակվեն հենց որ դրանք մատչելի լինեն համակարգի օպերատորին («իրականին մոտ ժամկետ»):

ա) երկու ուղղություններով հոսքերի տեխնիկական թողունակությունը.

բ) երկու ուղղությունների համար պայմանագրով նախատեսված ընդհանուր հաստատուն և ընդհատվող թողունակությունը.

գ) երկու ուղղությունների համար ներկայացվող հայտերն ու ճշգրտված հայտերը.

դ) երկու ուղղությունների համար մատչելի հաստատուն և ընդհատվող թողունակությունը.

ե) փաստացի ֆիզիկական հոսքերը.

զ) ընդհատվող թողունակության պլանավորված և փաստացի ընդհատումը.

է) մշտական ծառայությունների պլանավորված և չպլանավորված ընդհատումները, ինչպես նաև մշտական ծառայությունների վերականգնման մասին տեղեկությունները (մասնավորապես համակարգի սպասարկումը և սպասարկման ընթացքում ընդհատման համար ցանկալի տևողությունը): Պլանավորված ընդհատումները պետք է հրապարակվեն առնվազն 42 օր առաջ:

2) Համապատասխան բոլոր կետերում 3.3(1)(ա), (բ) և (դ) պարբերություններում նշված տեղեկությունները պետք է հրապարակվեն առնվազն տասնութ ամիս առաջ ժամկետում:

3)) Համապատասխան բոլոր կետերում փոխադրման համակարգի օպերատորները պետք է հրապարակեն 3.3(1)(ա)–ից (է) պարբերությունների պահանջների վերաբերյալ փաստագրական տեղեկությունները անցյալ 5 տարիների համար պարբերաբար:

4) Փոխադրման համակարգի օպերատորները պետք է հրապարակեն համախառն ջերմարարության չափված արժեքները կամ Ուոբբի ցուցիչը համապատասխան բոլոր կետերում՝ օրվա կտրվածքով: Նախնական տվյալները պետք է հրապարակվեն գազի մատակարարման համապատասխան օրվան հաջորդող առնվազն 3–րդ օրը: Վերջնական տվյալները պետք է հրապարակվեն համապատասխան ամսից հետո երեք ամսվա ընթացքում:

5) Համապատասխան բոլոր կետերի համար փոխադրման համակարգի օպերատորները պետք է հրապարակեն մատչելի թողունակությունները, պատվիրված և տեխնիկական

թողունակությունները՝ տարեկան կտրվածքով՝ բոլոր այն տարիների համար, երբ թողունակությունը նախատեսված է պայմանագրով՝ գումարած մեկ տարի, և առնվազն հաջորդ տասը տարիների համար: Այս տեղեկությունները պետք է թարմացվեն առնվազն յուրաքանչյուր ամիս կամ ավելի հաճախ, եթե նոր տեղեկություններ են մատչելի դառնում: Հրապարակումը պետք է անդրադարձնի այն ժամանակահատվածը, որի համար թողունակությունն առաջարկվում է շուկային:

3.4. Փոխադրման համակարգի վերաբերյալ հրապարակվելիք տեղեկություններն ու այդ տեղեկությունների հրապարակման ժամանակացույցը

1) Փոխադրման համակարգի օպերատորները պետք է ապահովեն առաջարկված և երկրորդային շուկայի համար պայմանագրով նախատեսված թողունակությունների ամփոփ քանակությունների՝ ամեն օր թարմացվող և օրվա կտրվածքով հրապարակումը (օրինակ՝ մեկ ցանցի օգտագործողի կողմից մեկ այլ ցանցի օգտագործողին վաճառված), եթե այդ տեղեկությունները մատչելի են ՓՀՕ համար: Այս տեղեկությունները պետք է ընդգրկեն հետևյալ առանձնահատկությունները՝

ա) փոխմիացման կետ, որտեղ վաճառվում է թողունակությունը.

բ) թողունակության տեսակը, օրինակ՝ մուտքային, ելքային, հաստատուն, ընդհատվող.

գ) թողունակությունն օգտագործելու իրավունքների քանակն ու տևողությունը.

դ) վաճառքի տեսակը, օրինակ՝ փոխանցում կամ հանձնում.

ե) առուվաճառքի/փոխանցումների ընդհանուր քանակը.

զ) փոխադրման համակարգի օպերատորին հայտնի ցանկացած այլ պայմաններ, որոնք նշված են 3.3. կետում:

Քանի դեռ այդ տեղեկությունները տրամադրվում են, երրորդ կողմի կողմից փոխադրման համակարգի օպերատորները պետք է ազատվեն սույն դրույթից:

2) Փոխադրման համակարգի օպերատորները պետք է հրապարակեն ներդաշնակեցված այն պայմանները, որոնց համաձայն նրանք ընդունում են թողունակության վերաբերյալ գործարքները (օրինակ՝ փոխանցումներ և զիջումներ): Այս պայմանները պետք է առնվազն ներառեն՝

ա) ստանդարտացված այն արտադրատեսակների նկարագրությունը, որոնք կարող են վաճառվել երկրորդային շուկայում.

բ) երկրորդային շուկաներում առուվաճառքի իրականացման/ընդունման/գրանցման համար անհրաժեշտ ժամանակը: Ուշացումների դեպքում պետք է հրապարակվեն պատճառները՝

գ) փոխադրման համակարգի օպերատորին վաճառողի կամ 3.4(1) կետում նշված երրորդ կողմի կողմից ծանուցումը վաճառողի և գնորդի անունի և 3.4(1) կետում նշված թողունակության առանձնահատկությունների վերաբերյալ:

Քանի դեռ այդ տեղեկությունները տրամադրվում են, երրորդ կողմի կողմից փոխադրման համակարգի օպերատորները պետք է ազատվեն սույն դրույթից:

3) Բաժանորդին գազ մատակարարելու ծառայության համակարգի վերաբերյալ փոխադրման համակարգի յուրաքանչյուր օպերատոր պետք է ցանցի յուրաքանչյուր օգտագործողի, ծառայության մատուցման ընթացքում, տրամադրի ծառայությունները չմատուցելու դեպքում հատուկ նախնական թողունակության և ծախսերի մասին տվյալները՝ ցանցի յուրաքանչյուր օգտագործողի հաշվով՝ ծառայության մատուցման ավարտից առնվազն մեկ ամիս հետո: Բեռնվաճառության ստանդարտացված բնույթի համաձայն սպասարկվող բաժանորդների վերջնական տվյալները կարող են տրամադրվել մինչև տասնչորս ամիս հետո: Քանի դեռ այդ տեղեկությունները տրամադրվում են, երրորդ կողմի կողմից փոխադրման համակարգի օպերատորները պետք է ազատվեն սույն դրույթից: Սույն տեղեկությունների տրամադրումը պետք է պահպանի առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը:

4) Եթե թույլատրելի շեղումներից բացի ճկուն ծառայություններն առաջարկվում են երրորդ կողմի մատչելիության համար, փոխադրման համակարգի օպերատորները պետք է մեկ օր առաջ սկզբունքով հրապարակեն ճկունության առավելագույն չափի վերաբերյալ օրական կանխատեսումները, ճկունության համար կանխատեսվող մակարդակն ու գազի մատակարարման հաջորդ օրվա ընթացքում շուկայում ճկունության մատչելիությունը: Փոխադրման համակարգի օպերատորը պետք է գազի մատակարարման յուրաքանչյուր օրվա վերջում հրապարակի նաև ճկուն ծառայություններից համապարփակ ձևով օգտվելու վերաբերյալ տեղեկությունները: Եթե ազգային կարգավորման մարմինը վստահ է, որ այդ տեղեկությունները կարող են ցանցի օգտագործողներին հնարավոր վնաս պատճառել, ապա այն կարող է որոշել փոխադրման համակարգի օպերատորին ազատել այս պարտավորությունից:

5) Ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գոտու համար փոխադրման համակարգի օպերատորները պետք է հրապարակեն գազի մատակարարման յուրաքանչյուր օրվա

սկզբում փոխադրման համակարգում եղած գազի ծավալը և գազի մատակարարման յուրաքանչյուր օրվա վերջում գազի ենթադրյալ ծավալը: Գազի մատակարարման յուրաքանչյուր օրվա վերջում գազի ենթադրյալ ծավալի վերաբերյալ տեղեկությունները պետք է թարմացվեն գազի մատակարարման յուրաքանչյուր օրվա ընթացքում ամեն ժամը մեկ անգամ: Եթե ծառայությունները չմատուցելու դեպքում գանձվող վճարները հաշվարկվում են ժամերի կտրվածքով, փոխադրման համակարգի օպերատորը պետք է փոխադրման համակարգում եղած գազի ծավալի մասին տվյալները հրապարակի ժամերի կտրվածքով: Հակառակ դեպքում, ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գոտու համար փոխադրման համակարգի օպերատորները պետք է հրապարակեն ծառայությունների մատուցման ժամանակահատվածի սկզբում բոլոր օգտագործողների համախառն անհավասարակշռության վիճակը և գազի մատակարարման յուրաքանչյուր օրվա վերջում բոլոր օգտագործողների ենթադրվող համախառն անհավասարակշռության վիճակը : Եթե ազգային կարգավորման մարմինը վստահ է, որ այդ տեղեկությունները կարող են ցանցի օգտագործողներին հնարավոր վնաս պատճառել, ապա այն կարող է որոշել փոխադրման համակարգի օպերատորին ազատել այս պարտավորությունից:

6) Փոխադրման համակարգի օպերատորները պետք է օգտագործողի համար արդյունավետ միջոցներ տրամադրեն սակագները հաշվարկելու համար:

7) Փոխադրման համակարգի օպերատորները, առնվազն հինգ տարի ժամկետով, պետք է համապատասխան ազգային մարմիններին տրամադրեն թողունակության մասին կնքված պայմանագրերի վերաբերյալ արդյունավետ գրառումները և մատչելի թողունակությունների հաշվարկման և հասանելիության վերաբերյալ այլ համապատասխան տեղեկությունները՝ մասնավորապես՝ անհատական հայտերն ու ընդհատումները: Փոխադրման համակարգի օպերատորները պետք է առնվազն հինգ տարի ժամկետով պահեն 3.3(4) և (5) կետերում նշված համապատասխան բոլոր տեղեկությունների վերաբերյալ փաստաթղթերը և, պահանջի առկայության դեպքում, դրանք մատչելի դարձնեն կարգավորման մարմնի համար: Երկու կողմերն էլ պետք է պահպանեն առևտրային գաղտնիքը:

▼B

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Թիվ 1775/2005 կանոնակարգ (ԵՀ).	Սույն Կանոնակարգը
Հոդված 1	Հոդված 1
Հոդված 2	Հոդված 2
—	Հոդված 3
—	Հոդված 4
—	Հոդված 5
—	Հոդված 6
—	Հոդված 7
—	Հոդված 8
—	Հոդված 9
—	Հոդված 10
—	Հոդված 11
—	Հոդված 12
Հոդված 3	Հոդված 13
Հոդված 4	Հոդված 14
—	Հոդված 15
Հոդված 5	Հոդված 16

—	Հողված 17
Հողված 6	Հողված 18
—	Հողված 19
—	Հողված 20
Հողված 7	Հողված 21
Հողված 8	Հողված 22
Հողված 9	Հողված 23
Հողված 10	Հողված 24
Հողված 11	Հողված 25
Հողված 12	Հողված 26
Հողված 13	Հողված 27
Հողված 14	Հողված 28
Հողված 15	Հողված 29
Հողված 16	Հողված 30
—	Հողված 31
Հողված 17	Հողված 32
Հավելված	Հավելված I

(11) ՊՏ C 211, 19.08.2008թ., էջ 23:

(2) ՊՏ C 172, 05.07.2008թ., էջ 55:

(3) Եվրոպական պառլամենտի 2008 թվականի հուլիսի 9-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել), Խորհրդի 2009 թվականի հունվարի 9-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 75 E, 31.03.2009թ., էջ 38) և Եվրոպական պառլամենտի 2009 թվականի ապրիլի 22-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել): Խորհրդի 2009 թվականի հունիսի 25-ի որոշում:

(4) ՊՏ L 176, 15.07.2003թ., էջ 57:

(5) ՊՏ L 289, 03.11.2005թ., էջ 1:

(6) Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 94-րդ էջը:

(7) Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 1-ին էջը:

(8) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

(9) ՊՏ L 262, 22.09.2006թ., էջ 1: